

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԴԵԳԻԵԳԱԾՍ

ديقچادو

Հրատարակողն Գաղիբէի Հ.Բ.Ը.Մ.Ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



**2009-2010
ՏԱՐՇԲՐՁԱՆԻ
ԳԵՐԱԶԱՆՑԻԿ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ
ՀԲԸՄ-ի Գ-ԱՀԻՐԷԻ
ՄԱՍՆԱՃԻԳԻ
ԿԱՐԳ ՄԸ
ՎԱՐՉԱԿԱՆՆԵՐՈՒ
ՀԵՏ**

**ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ
ՊԱՍ-ՔԷԹ-ՊՈԼԻ
ՏՂՈՑ ՅԱՂԹ-ԱԿԱՆ
ԽՈՒՄԱԸ ՎԵՐՋԻՆ
ԲԱԾ-ԱԿԸ Ի ՁԵՌՆԻՆ**



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	ՄԻՈՒԹԻՒՆ - Դեկտեմբեր 1914	1
	ՀԲԸՄ - Յիշատակներ	2
	<i>Յակոբ Սեպուհեան</i> <i>Թրգմ. Անայիս Ճիզմեճեան</i>	
	Եգիպտահայ Արուեստագետ Հրանդ Զեշիշեանի Յետահայեաց Առաջին Ցուցահանդեսը	4
	<i>Թրգմ. Ա. Տեօվլեթեան</i>	
ԽՄԲԱԳԻՐ Արաքսի Տեօվլեթեան	Գիր Հայրապետական Օրհնութեան Եւ Չնահատանաց Առ Սիրեցեալ Որդիս Մեր Եւ Հարազատ Չաւակս Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Մեծարգոյ Տէր Եւ Տիկին Հրաչ Եւ Վիվիան Սիմոնեաններ Որ Ի Կահիրէ, Եգիպտոս	7
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ Պերճ Թերզեան	Սուրբ Ներսէս Շնորհալի Շքանշանի Եւ Հայրապետական Սրբատառ Կոնդակի Ցուչութիւն Տէր Եւ Տիկին Հրաչ Եւ Վիվիան Սիմոնեաններու «Տ»	8
ՍՐԲԱԳՐԻՉ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ Անայիս Ճիզմեճեան	Սուրբ Ներսէս Շնորհալի Շքանշան Եւ Հայրապետական Սրբատառ Կոնդակ Տիար Յակոբ Փիանտարեանի «Տ»	9
ԳԵՂԱՐՈՒԵՏՍԱԿԱՆ ՁԵՒԱՌՐՈՒՄ Շահէ Լուսարարեան	Տիար Պերճ Թերզեանի «Յետադարձ Անդրադարձ» Հատորին Շնորհանդեսը	10
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՇԱՐՈՒՄՁԸ Գարողին Հէշեմա	Պարգևատրում 2009-2010 Տարեշրջանի Գահիրեի Գերագանցիկ Ուսանողներուն <i>Թրգմ. Ա.Ճ</i>	11
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Nubar Printing House	Հայկական Երեկոյ Աղեքսանդրիոյ Գրադարանին Մէջ <i>Թրգմ. Ա.Ճ</i>	14
	Արուեստագետ Վ.Վարժապետեանի Վերջին Կտաներուն Ցուցահանդեսը	15
	Հոգեւոր Երգի Դ Փառատօսին Հայ Եկեղեցւոյ Մասնակցութիւնը <i>Դիւան Գահիրեի Ազգային Առաջնորդարանի</i>	16
	Տոքթ. Եղուարդ Դանիելեանի Դասախօսութիւնները Գահիրեի Եւ Աղեքսանդրիոյ Մէջ	17
	Հայ Գեղարուեստասիրաց Միութեան Կազմակերպած Երիտասարդական Փառատօնը <i>«Տ»</i>	18
	ՀՄԸՄ Արարատի Մրցաշարքը <i>Սօսի Ներքտեան - Յակոբեան</i>	20
	ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Երեց Տղոց Եւ Աղջիկներու Պասքեթպոլի Խումբերը Պէյրութի Մէջ <i>Սօսի Ներքտեան - Յակոբեան</i>	22
	ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ - Յաղթանակներու Տօնախմբութիւն <i>Սօսի Ներքտեան - Յակոբեան</i>	25
	Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Կաղանդի Պագարը <i>Թրգմ. Ա.Ճ</i>	26
	Կաղանդ Պապան Կ'այցելէ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ <i>Թրգմ. Ա.Ճ</i>	27
	Կաղանդ Պապան Կ'այցելէ ՀԲԸՄի «Ծիածան» Մանկական Երգչախումբին <i>Թրգմ. Ա.Ճ</i>	27
ԹԻՒ 58 Նոր Շրջան ՅՈՒՆՈՒԱՐ 2011	Անդամական	28

Խմբագրութիւնս իր շնորհակալութիւնը եւ գնահատանքը կը յայտնէ Տիար Օհան Ծանիկեանի, «Տեղեկատու»ի մէջ լոյս տեսած կարգ մը յօդուածներու լուսանկարները տրամադրելուն համար:



ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ԳԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

"MIOUTIOUN..

Organe de L'UNION GÉNÉRALE ARMÉNIENNE de BIENFAISANCE

B. P. 1079 33, Rue Madabegh

— ԹԵԼԵԳՐԱՄ 3605 — LE CAIRE (Egypte)

Տարեկան — կամեյիկ 6 Ժրանգ

Ամենեկայի կամար 1 Յօլար

Չհախ — քիւր 1/2 Ժրանգ

«ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՅՐՈՒԹԻՒՆ ԷՅ

«ԵՂԱՍԵՐ ԵՄԵ ԱՆԼԵ...»

Գ. ՏԱՐԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1914

ԹԻԻ 36

1915 § § ԱՄԱՆՈՐ § § 1915

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

Գ Ե Վ Ր. Վ Ա Ր Ե. Ժ Ո Վ Ո Վ Է

Կը փութայ նոր Տարուայ առթի իր սրտագին շնորհաւորութիւնները յայտնել Միութեան Մասնաժողովներուն եւ իրենց արջանակին մէջ գտնուող յարգոյ Անդամներուն, մաղթելով որ յառաջիկայ Տարեւոյցանը Հայութեան համար խաղաղութեան եւ բարօրութեան մօտ թուական մը բանայ, եւ Միութեան համար փայլուն գործունէութեան արգիւնաւէտ ասպարէզ մը:

Գանիւն,
31 Դեկտեմբեր 1914

Ա Տ Ն Ա Գ Ս Տ
Պ Ե Վ Ո Ս Փ Ա Տ Ա Ն Ո Ւ Փ Ո Ր

Ծ.Խ. Վերելի սկարը կը ներկայացնէ 1912-Էն սկսեալ լոյս տեսնող ԶԲԸ-ի անդրանիկ պաշտօնաթերթ «Միութիւն»ի Դեկտեմբեր 1914-ի (թիւ 36 - Գ Տարի) շապիկը:
Յատկանշական է անդրադառնալ թէ հակառակ որ համաշխարհային Ա. պատերազմը Օգոստոս 1914-Էն ի վեր պայթած էր, 1915-ի սեմին ոչ ոք կրնար երեւակայել, ներառեալ ԶԲԸ-ի գերագոյն ղեկավարութիւնը, քանի մը ամիս վերջ հայութեան դէմ գործադրուելիք ցեղասպանութիւնը եւ անոր դառն հետեւանքները զորս ցայտօր կը կրենք:



Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ն Ե Ր

Յակոբ Սեպուհեան

1956ի սկիզբներն էր, երբ լուսահոգի հայրս՝ Սեպուհ, գիս տարաւ Գահիրէի ԶԲԸՄի կեդրոնը՝ որ կը գտնուէր 15, Էմատ Էլ Տին փողոցը:

Հազիւ 12 տարեկան էի եւ առաջին անգամս էր որ ոտք կը կոխէի այդպիսի տպաւորիչ, հսկայ կառոյցէ մը ներս: Զըրտնաթաթախ ու դիւրագգած վիճակի մը մէջ էի: Աստիճաններէն բարձրացանք առաջին յարկ. եթէ չեմ սխալիր, այնտեղ կային երկու դռներ եւ մենք ուղղուեցանք դէպի աջ դուռը որ ԶԲԸՄի կեդրոնատեղիին մուտքն էր: Ներս մտանք. երկրորդ սենեակը ուր նստած էր դիւանապետ Տիար Վարդգէս Գարտաշեանը:

Պր.Գարտաշեան՝ խոժոռ, խստադէմ անձ մըն էր. մեզի հետ ունեցած տեսակցութեան ամբողջ տեւողութեան ժպիտի նշոյլ մը իսկ չերեւաց իր դէմքին վրայ: Ան երկիւղ կ'ազդէր, գէթ ինծի նման 12 տարեկան տղու մը վրայ: Պիտի ուզէի գիտնալ թէ ի՞նչ կարծիք կազմած էր հայրս անոր մասին:

Ամէն պարագայի, հայրս եւ ես լաւ տպաւորութիւն թողած ըլլալու էինք անոր վրայ, քանի որ ան կրթաթոշակ յատկացուց ինծի, որպէսզի կարենամ երկրորդական ուսումս շարունակել մեր նախընտրած վարժարաններէն մէկուն մէջ: Այս շատ նպաստաւոր եղաւ մեզի համար, քանի անհատական օտար վարժարաններու թոշակները բաւական բարձր էին: Սակայն ան նշեց որ կրթաթոշակս պահպանելու համար, պայման էր որ լաւ արդիւնքներ ձեռք բերէի, ինչպէս նաեւ անդամ արձանագրուէի ԶԲԸՄին:

Այս հանդիպումէն մէկ երկու օր վերջ, հայրս գիս տարաւ «College De La Salle» այն ժամանակուան տղոց լաւագոյն վարժարաններէն մէկը Գահիրէի մէջ: Այդ կը պատահէր յաջորդ տարեշրջանի վերամուտէն մօտ եօթ ամիս առաջ: Վարժարանի տնօրէնը հօրս յայտնեց՝ թէ շատ ուշ մնացեր էր գիս արձանագրելու համար, որ կը

նշանակէր թէ հարկ էր ուրիշ վարժարան մը դիմել: Վերջ ի վերջոյ արձանագրուեցայ աւելի աժան վարժարան մը ուր մեծ թիւով հայ աշակերտներ կային: Ծնողքս խորհեցան՝ թէ առաւելութիւն մըն էր այդ, քանի որ անոնց միջոցաւ պիտի կարենայի աւելի դիւրաւ շփման մէջ մտնել եգիպտացի մեծաթիւ աշակերտներուն հետ, տրուած ըլլալով որ չորս տարեկանես ի վեր հայկական վարժարան կը յաճախէի:

Այժմ պարտաւորուած էի ներկայ գտնուելու ԶԲԸՄի կազմակերպած բոլոր ձեռնարկներուն, դասախօսութիւններուն եւ այլազան հաւաքներուն, որոնք տեղի կ'ունենային Ուրբաթ երեկոները կեդրոնատեղիին ամենաընդարձակ սենեակին մէջ:

Դասախօսութիւններէն ոմանք կը տրուէին երիտասադ անդամներու կողմէ, ուրիշներ՝ ակադեմականներու կողմէ ինչպէս պատմաբան Արշակ Ալպոյաճեան: Դժբախտաբար, մեզի պէս պատանիներու մեծամասնութեան համար, պատմութիւնը ձանձրացուցիչ կը թուէր, բացի եթէ դասաւանդուէր գրաւիչ կերպով մը: Պր.Ալպոյաճեանի դասախօսութիւնները, մեզի համար, ոչ հետաքրքրական եւ ոչ ալ նեղացուցիչ էին: Կը կարծեմ թէ, երբ անհատ մը յառաջանայ տարիքով, այն ժամանակ միայն, շնորհիւ իր կեանքի փորձառութիւններուն, կը սկսի աւելի հետաքրքրուիլ պատմական, քաղաքական, դասական երաժշտութեան նման նիւթերով, ինչպէս նաեւ ընտիր գիւնիւղ...:

Այսպէս, գրեթէ ամէն Ուրբաթ երեկոյ, այլազան ձեռնարկներ տեղի կ'ունենային Գահիրէի ԶԲԸՄէն ներս, ինչպէս նկարչական ցուցահանդէսներ, դասախօսութիւններ եւ այլն. կը կազմակերպուէին նաեւ զբօսապտոյտներ: Ես ալ, այս առիթներով, պատեհութիւնը կ'ունենայի ծանօթանալու բազմաթիւ երիտասարդներու:

Եթէ չեմ սխալիր, 1959ի շուրջ էր երբ կազմուեցաւ ԶԲԸՄի Երիտասարդաց



Յանձնախումբը եւ անկէ վերջ էր որ սկսան կազմակերպուիլ ամենահետաքրքրական ձեռնարկները: Այն ժամանակ ես ալ մաս կը կազմէի այդ միութեան: Չբօսապտոյտներ կատարեցինք դէպի «Kas Farid» Կարմիր Ծովուն վրայ եւ «Lac Karoun» Ֆայումի մէջ, ուր Ֆարուք Թագաւորը սովորութիւն ուներ որսի երթալու:

Մեր կազմակերպած ամենայիշատակելի ձեռնարկներէն մէկը արուեստի ցուցահանդէս մըն էր, որ կայացաւ ԶԲԸՄի կեդրոնատեղիի դահլիճին մէջ: Բախտաւոր էինք, որ իբր ուղեցոյց եւ իրաւարար ունէինք նշանաւոր երգիծանկարիչ Աղեքսանդր Սարուխանը: Մեծ արուեստագետը սատարած է եգիպտական ծանօթ հրատարակութիւններու զարգացման եւ վերելքին, ինչպէս «Ախըր Սաա»ի եւ «Ախպար Էլ եոմ»ի: Այս վերջինին մէջ ան սովոր էր ամէն օր երգիծանկարով մը իր գերակայութիւնը ցուցաբերել:

1961-ին, երկրորդական ուսմանս ավարտին հետ, վերջացաւ նաեւ ԶԲԸՄի ինծի շնորհած կրթաթոշակը: Սակայն ես շարունակեցի իմ անդամակցութիւնս եւ աշակցութիւնս բերել Երիտասարդաց Յանձնախումբին որուն ատենապետը եղայ մօտ երկու տարի, նախքան Եգիպտոսէն հեռանալս:

Անշուշտ կը յիշէք, թէ գրութեանս սկիզբը մէջբերած էի թէ ԶԲԸՄի կեդրոնատեղիին մէջ, Պր. Գարտաշեանին սենեակը երկրորդն էր: Ուրեմն, առաջինը՝ գրասենեակն էր Պր. Սիսակ Շալճեանին, զուարթ դէմքով, շատ ընկերական անձ մը, ճիշտ հակապատկերը Պր. Գարտաշեանին: Չեմ յիշեր թէ ի՞նչ էր իր պաշտօնը սակայն զինք յաճախ կը տեսնէի քանի որ իր գրասենեակը կը գտնուէր մուտքի դրան ճիշդ դիմաց: Ուրեմն ամէն անգամ որ կեդրոնատեղի երթայի, բարեւ մը կու տայի. այսպիսով քաջալերուած՝ սկսանք խօսակցիլ միասին. շատ համակրելի անձ մըն էր: Եթէ չեմ սխալիր, ան նաեւ խմբագիրն էր Գահիրէի ԶԲԸՄի «Տեղեկատու» պաշտօնաթերթին:

1958-ին, Եգիպտոս եւ Սուրիա Միացեալ Զանրապետութիւն կազմած էին եւ այդ առիթով ուսանողներու փոխանակման ծրագիր մը որդեգրուած էր: Ես՝ «Maronite»ներու վարժարանի վեց բախ-

տաւոր աշակերտներէն մէկն էի, որոնց վիճակուած էր Սուրիա մեկնիլ տասնվեցօրեայ այցելութեամբ մը: Եգիպտոս վերադարձիս, Պր. Շալճեան ինձմէ խնդրեց որ շրջապտոյտիս մասին տեղեկագրութիւն մը գրեմ «Տեղեկատու»ին համար, ինչ որ կատարեցի հաճոյքով. այդ իմ առաջին գրութիւնս եղաւ հայկական պարբերաթերթի մը մէջ:

Նասերեան շրջանին, պարտաւորիչ դարձած էր որ Եգիպտոսի մէջ տեղի ունեցող բոլոր ժողովներուն ատենագրութիւնները գրուին արաբերէն լեզուով: Ուրեմն, ԶԲԸՄի վարչութիւնը ինձմէ խնդրեց որ հայերէն արաբերէնի թարգմանեմ իրենց ժողովներուն ատենագրութիւնները. ինչ որ սիրով ընդունեցի եւ այդ պարտականութիւնը կատարեցի մօտ տարի ու կես:

Բնաւ մտքես չէ շնջուած այն օրը՝ երբ դեմ առ դեմ գտնուեցայ հայ մեծատաղանդ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանի հետ: Բանաստեղծուհին նախ ընդունուեցաւ ԶԲԸՄի գրասենեակը ապա երիտասարդներով շրջապատուած առաջնորդուեցաւ նոյն շրջապատին մէջ գտնուող դիմացի շէնքին առաջին յարկը, որ անելի ընդարձակ սրահ մը ուներ: 1963-ի այդ երեկոյեան, այնտեղ հաւաքուած էին անելի քան 90 խանդավառ հայորդիներ: Ես այդ օրը ինքզինքս առանձնաշնորհեալ կը զգայի քանի որ ինծի վիճակուած էր, ԶԲԸՄի Երիտասարդաց Յանձնախումբին անունով բարի գալուստի խօսք ուղղել ականաւոր, մեծարեալ հիւրին: Խօսքս վերջացնելէ յետոյ, ականածանքով մօտեցայ բանաստեղծուհիին ու ներկայացուցի յուշատետրս: Իր արձանագրած տողերն ու ստորագրութիւնը գուրգուրանքով պահած եմ մինչեւ այսօր:

Երբ յետադարձ ակնարկ մը նետեմ Գահիրէի ԶԲԸՄի հետ գործակցած անցեալի տարիներուս վրայ, կը վերակենդանանան իմ մէջ անոյշ յիշատակներ: Իսկ այնտեղի ունեցած փորձառութիւններս ճամբայ հարթեցին որպէս զի կարենամ հետագային շարունակել հայկական հասարակական իմ գործունեութիւններս:

Թրգմ. Անայիս Ծիգմեճեան.



ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՀՐԱՆԴ-ՔԷՇԻՇԵԱՆԻ ՅԵՏԱՀԱՅԵԱՑ ԱՌԱՋԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԳԷՍՐ

ԵՐԲ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ Կ՛ԱՐՁԱՆԱԳՐԷ ԻՐ ԿԵԱՆՔԸ ԻՐ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒՆ ԿՐԱՅ



Արուեստագետ Յրանդ Քէշիշեանի յետահայեաց առաջին ցուցահանդէսին բացումը կը կատարէ «Էլ Աիրամ» օրաթերթի սիւնակագիր Էզգաթ Էլ Սաատանի: Ձախիսն՝ արուեստագետ Յրանդ Քէշիշեան

Ատորել Նակուա Էլ Աշրիի գրիչով Էլ Աիրամ օրաթերթին մէջ, 23 Դեկտեմբեր 2010-ին լոյս տեսած գրութեան թարգմանութիւնը արուեստագետ Յրանդ Քէշիշեանի Գահիրէի Օբերայի համալիրի գեղարուեստի մեծ դահլիճին մէջ, 2010-ի Դեկտեմբեր 4-9 կայացած անհատական յետահայեաց ցուցահանդէսին մասին :
ԻՄՐ.

Ներկայիս Գահիրէի Օբերայի համալիրի գեղարուեստի մեծ դահլիճին մէջ տեղի կ'ունենայ եգիպտահայ արուեստագետ Յրանդ Քէշիշեանի յետահայեաց ցուցահանդէսը, որ կը պարփակէ 63 գործ (հեղինակը 63 տարեկան է) որոնք ան ընտրած է իր 600 նկարներէն, ներկայացնելու համար իր արուեստին զանազան հանգրուանները, սկսեալ իր պատանեկութեան շրջանէն, զոր ան կ'անուանէ «գերօ» շրջան:

Այս շրջանը ներկայացուած է հետեւեալ խորագիրները կրող երեք գործերով: «Միամիի Ծովափին՝ Աղեքսանդրիա», որ հեղինակին 1955-ի գործերէն է, «Մեծ Յօրս՝ Յրանդի Դիմանկարը» 1957ին եւ «Վիրաւոր Եղնիկը» 1958-ին:

Ներկայացնելէ առաջ ցուցահանդէսին մնացեալ գործերը, անդրադառնալ արուեստագետին կենսագրութեան, օգտագործելով այս առթիւ անոր լոյս ընծայած ալպոմին մէջ տեղ գտած ամփոփ ինքնակենսագրականը:

Յեղինակը ինքզինք չափազանց բախ-

տաւոր կը համարէ Գահիրէի մէջ ծնած ըլլալուն համար, 10 Ապրիլ 1947-ին: Եգիպտոսը իր առաջին սերն է եւ վստահաբար պիտի ըլլայ իր վերջինը, ինչպէս կ'ըսէ ան:

Հայրը մեծ հօրմէն ժառանգած խանութ մը ուներ եւ կը զբաղէր ծխախոտի մեծաքանակ առեւտուրով: Ընտանիքին բնակարանը կը գտնուէր Կիզա եւ ան յաճախ հօր ընկերակցութեամբ կ'այցելէր բուրգերը, կենդանաբանական պարտէզը եւ Նեղոսի ափերը: Այս էր պատճառը որ բուրգերը դառնան իր նախընտրած նիւթերէն մէկը որ օգտագործած է իր արուեստին մէջ, ինչպէս նաեւ նկարած կարգ մը բնանկարներ կիսավերացական իր ստեղծագործական երկրորդ շրջանին 1967-1971-ի կեսերուն հիմնուելով կենդանաբանական պարտէզին մէջ գծած սեւագրութիւններուն վրայ:

Յրանդ Քէշիշեան իր գեղարուեստի կրակը ժառանգած է մօրմէն, որ կիրառական արուեստի սիրահար էր, իսկ երաժշտութեան հանդէպ ունեցած մեծ սերը՝ հօրմէն եւ հօրաքոյրէն, որ դաշնամուրի դասեր



Արուեստագետը իր նկարներուն մասին բացատրութիւններ կու տայ այցելուներուն Ձախին՝ Արհ. Տ. Գրիգոր Եպս. Գուսան եւ Տիար Էզգար Շլ Սաստանի

կ'առնէր: Հայրը զինք իր հետ ցուցահանդէսներ եւ թանգարաններ կը տանէր:

Իր կեանքին ճակատագրական փոփոխութիւնը տեղի կ'ունենայ երբ 1961-ին 20-րդ դարու համբաւաւոր երաժշտահան Արամ Խաչատուրեան կ'այցելէ Եգիպտոս եւ Հրանդ Բէշիշեանի կը վիճակուի ներկայ գտնուիլ անոր երկու նուագահանդէսներուն, որմէ ետք Բէշիշեան կը յայտնաբերէ, որ ծնած է արուեստագետ ըլլալու: Այդ թուականէն սկսեալ ան լրջօրէն երաժշտութեան եւ արուեստի սիրահար կը դառնայ:

1966-1971 Բէշիշեան ուսանած է Չամալէքի Գեղարուեստի Հիմնարկի նկարչութեան բաժնին մէջ եւ հմտութիւն ձեռք բերած շնորհիւ իր արուեստագետ դասախօսին՝ Տոքթ. Մամտուհ Ամմարի:

1969-ի ամրան իրականացաւ Բէշիշեանի այդ շրջանի ամենամեծ երազանքը՝ այցելութիւն Եւրոպա երկու ամիսով, որու ընթացքին անոր կեանքը որպէս մարդ եւ արուեստագետ արմատական փոփոխութիւն կրեց:

Ան Գեղարուեստի Հիմնարկը աւարտելէ ետք, նախակրթարանի արուեստի ուսուցիչ նշանակուեցաւ Ասուանի մօտ գտնուող գիւղի մը մէջ եւ մէկ շաբաթ անց ան վերադարձաւ ընկճուած, սակայն արուեստ արարելու ուժով տոգորուած: Այս իրավիճակը պատճառ եղաւ ստեղծելու իր լաւագոյն գործերէն մէկը՝ ինքնանկարը, սիւնանման ձեռքերով, որմէ ետք ան «Միքրոքոզմոս» խորագիրով ստեղծեց շարք մը նկարներ, որոնք թռիչք տուին իր ապագայ ստեղծագործական կեանքին:

1974-ի սկիզբը Խորհրդային Հայաստան մեկնումը Բէշիշեանի կեանքին անկիւնադարձը հանդիսացաւ ամբողջովին փոխելով զայն:

Այս շրջանին ան ստեղծագործեց բազում կտաւներ: Ան ներգաղթի առաջին տարիներուն զգաց թէ գործած էր իր կեանքի ամենամեծ սխալը: Ոչ ոք գնահատեց իր արուեստը կամ հասկցաւ իր արժէքը, որովհետեւ կը բացատրէ Բէշիշեան, իր անհատականութիւնը եւ արուեստը բոլորովին տարբեր ընկերութեան մը արդիւնքն էին: Հակառակ այս իրողութեան այդտեղ իր կեցութեան 16 տարիներուն ընթացքին ան կարողացաւ յաղթահարել իր վիատութիւնը, դառն ցաւերը եւ մեկուսացման զգացումը ու իր կարողութիւնը բաժնելով նկարչութեան եւ երաժշտութեան միջեւ, դասաւորեց իր կեանքը: Այս շրջանի իր գործերը կը ցուցնեն իր հոգեվիճակը:

1989-ի Հոկտեմբերին Բէշիշեան կը վերադառնայ Եգիպտոս: 1990-ին, իր արուեստագետ բարեկամին՝ Ատել Էլ Շարքաուիի օգնութեամբ կազմակերպած իր առաջին անհատական ցուցահանդէսը Գահիրէի մէջ, պատճառ կը դառնայ որ Բէշիշեան Գահիրէի Գեղարուեստից Ընկերակցութեան անդամ ընդունուի: Այս ցուցահանդէսով առաջին անգամ ըլլալով Բէշիշեան իր շրջապատէն կ'ընդունուի որպէս արիեստավարժ արուեստագետ, բան մը որ իրեն զլացուած էր Հայաստանի մէջ:

Հրանդ Բէշիշեանի երաժշտական գործունեութեան վերադարձին նպաստեցին իր բարեկամուհին՝ Ինայաթ Ուասֆին, հարազատները եւ Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչական անդամները: Այս շրջանին է որ արուեստագետին ստեղծագործական 6-րդ շրջանը կը սկսի եւ ան կը յաջողի յաղթահարել իր վիրաւոր հոգեկան վիճակը:

2007-ին կը սկսի անոր ստեղծագործական եօթներորդ եւ վերջին շրջանը, երբ ան իր ստեղծագործական աշխատանքին կողքին կ'որոշէ իրագործել երկու կարեւոր գործեր, առաջինը՝ պատրաստել իր գե-



ղանկարչական գործերուն ակադմը, որոնց թիւը կը հասնի 2200-ի եւ երկրորդը՝ հրատարակութեան պատրաստելի երաժշտական գործերը, որոնց հովանաւորութիւնը ստանձնած է Գահիրէի ԶԲԸՄ-ը:

Վերադառնանք Գահիրէի օբերայի համալիրին մէջ Դեկտեմբեր 4-9 կայացած յետահայեաց ցուցահանդէսի ցուցակներուն:

Արուեստագետին ստեղծագործական առաջին շրջանը 1962-1966 կը ներկայանայ ցուցադրուած 5 գործերով՝ «Փրկութիւն», «Ծովային Տեսարան», «Ափրիկեան Բնակար», «Ծաղիկներ» եւ «Տիեզերագնացներ»: Երկրորդ շրջանը (1967-1971-ի կեսերը) որուն հեղինակը «Ակադեմական շրջան» կը յորջորջէ, ներկայացուած է 10 նկարներով, որոնցմէ «Ինքնանկար Պեխով», «Փողոց Մը Իսլամական Գահիրէի Մէջ», «Մեծ Մայրս Էլմոնէ Քէշիշեան», «Վռամ Նալպանտեանի Դիմանկարը», «Չուարթ Ծոցը», «Արուեստագետ Մօրս՝ Սիրվարդի Դիմանկարը» եւ այլն:



Արուեստագետ Զրանդ Քէշիշեանի ինքնանկարը

Արուեստագետը ստեղծագործական երրորդ շրջանին (1971-ի կեսէն 1973-ի վերջ) կուտայ արտայայտչական առաջին շրջան անունը, որ կ'ընդգրկէ նոյնպէս 10 գործեր, որոնցմէ են «Ինքնանկար», «Աղջկայ Զետ», «Փողոցի Երկու Տղաք», «Ծարաւը», «Երջանկութիւն», «Ստեղծում Ստուերի Մէջ», եւ այլն:

Չորրորդ շրջանը (1974-1978) արուեստագետը կոչած է ինքնաարտայայտման կամ սպիտակ շրջան, հինգերորդը՝ ածուխի շրջան 1979-1989, հեղինակը այս շրջանը կը կոչէ արդի առաջին շրջանէն վերջ եւ 1991-1997 որ 6-րդ շրջանն է «Աքրիլիք»:

Վերջին շրջանը՝ 7-րդը, որ կը սկսի 2008-ի Օգոստոսին եւ կը շարունակուի ցայսօր, արուեստագետը վերադարձած է նկարչական ստեղծագործութեան, աւելի քան տասը տարի ամուլ մնալէ ետք: Այս շրջանի գործերը կը ցուցնեն հեղինակին հոգեկան հանդարտութիւնը եւ մտքի հանգստութիւնը:

Թրգմ. Ա. Տեովլէթեան



Արուեստագետ Զրանդ Քէշիշեան շրջապատուած Արի. Տ. Գրիգոր Եպս. Գուսակի, ԶԲԸՄ-ի կարգ մը վարչականներու եւ այլ անձերու կողմէ



**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻՄՈՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՀՐԱԶ ԵՒ ՎԻՎԻԱՆ ՄԻՄՈՆԵԱՆՆԵՐ
ՈՐ Ի ԿԱՀԻՐԷ ԵԳԻՊՏՈՍ**

Համայն Հայութեան Հաւատի նուիրական օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում՝ Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Հաւատաւոր մեր ժողովրդի արժանաւոր զաւակներիդ:

Սիրելիներ, ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ ուրախ ենք նշելու, որ Դուք տամնեակ տարիներ լցուած էք ազգանպաստ, եկեղեցաշէն ծառայութեան՝ Ձեր շնորհներն ու կարողութիւնները նախանձախնդրութեամբ ի սպաս դնելով Քրիստոսասէր մեր ժողովրդին:

Նուիրեալ Ձեր գործունէութիւնը Տիրոջ օրհնութեան ներքոյ արդիւնաւորուել է Հարուստ վաստակով Եգիպտոսի Հայոց Թեմոն: Բեղուն, երկարամեայ սպասաւորութեամբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան* առաքելութեան ծիրից ներս Դուք նաեւ կարեւոր ներդրում էք բերել Կահիրէի Հայ Համայնքի ազգային-եկեղեցական կեանքի պայծառութեանն ու առաջընթացին:

Արժանայիշատակ է յատկապէս Ձեր բարի նպաստը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան արգասաւորման եւ Մայր Հայրենիքում վերսկսուած եկեղեցաշինական աստուածաճաճոյ գործում, երբ Հայոց Մեծ Դարձի 1700-ամեակի յօբելեանական տարում Դուք սրտաբուխ նուիրատուութեամբ կարեւոր աւանդ բերեցիք Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցու կառուցմանը: Այսօր շքեղակառոյց եկեղեցին իր օրհնաբեր եւ շնորհաբաշխ յարկի ներքոյ է ընդունում բազմաթիւ Հաւատացեալների, ուլքեր իրենց աղօթքներում յիշում են նաեւ մայր եկեղեցու շինութեան գործում ներդրում ունեցած Հաւատաւոր Հայորդիներին, Հարազատ զաւակներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր գնահատանքը Ձեր ծառայութեանց ու բարի վաստակի Համար եւ սիրով ընդառաջ Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաջնորդ Եպիսկոպոս Մնացականեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ:

ՍՈՒՐԲ ԵՐՏՍԷՍ ԸՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Վստահ ենք, որ մեր Սուրբ Եկեղեցու Հանդէպ որդիական զգացումներով պիտի շարունակէք արդիւնաւոր Ձեր ընթացքը աստուածաճաճոյ նորանոր ձեռնարկներով ի սեր մեր բարեպաշտ ժողովրդի եւ ի զօրացումն Համազգային մեր կեանքի:

Ի խորոց որտի Մեր աղօթքն է, որ Բարձրեալ Տերն Իր Հանապազ օրհնութեամբ զօրավիզ ու աջակից լինի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, երջանկութիւն եւ ամենայն բարիք:

Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն, յԱստուծոյ ի Հօրէ, եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր, ճշմարտութեամբ եւ սիրով եղիցին ընդ ձեզ (Բ Յովհ. 3):

Օրհնութեամբ՝

**ԳՐԵԳՈՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*Տիար Գրաջ Սիմոնեան երկար տասնամեակներ գործունէութիւն ունեցած է որպէս գայլիկ, մարզիկ, վարչական եւ ապա 16 տարի ատենապետ Դելիոպոլսոյ ԿՍԸՍ ՆՈՒՊԱՐ-ի մէջ, որ Աղեքսանդրիոյ ԿՍԸՍ ՆՈՒՊԱՐ-ի հետ կը ներկայացնէ ԿՍԸՍ-ի մարզական թելը Եգիպտոսի մէջ:



ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ Ե-ՔԱՆՇԱՆԻ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՐԲԱՏԱՌ-ԿՈՆԴԱԿԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՀՐԱԶ ԵՒ ՎԻՎԻԱՆ ՍԻՄՈՆԵԱՆՆԵՐՈՒ

Վատահաբար Տեր եւ Տիկին Յրաչ Սիմոնեաններ իրենց կեանքի Ամանորեան ամենաիրայատուկ ու թանկարժէք նուէրին արժանացան, 2011-ի Սուրբ Ծննդեան օրը:

Հինգշաբթի Յունուարի 6-ին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Ս.Ծննդեան հանդիսաւոր Ս.Պատարագը մատուցեց Եգիպտոսի Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Ս. Աշոտ Ս. Եպիսկոպոս Մնացականեան: Ս.Պատարագի ընթացքին, Գերշ. Սրբազան Հայրը ընթերցելէ ետք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ամանորեան եւ Ս.Ծննդեան Պատգամը, ընթերցեց նաեւ, Նորին Սրբութեան Տեր եւ Տիկին Յրաչ եւ Վիվիան Սիմոնեաններու ուղղած Օրհնութեան եւ Գնահատանքի Գիրը, որով կը յայտնէր, թէ անոնք, Գահիրէի հայ համայնքէն ներս իրենց ունեցած ազգային եկեղեցական գործունեութեան եւ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցին կառուցմանը բերած կարեւոր նպաստին համար կ'արժանանան Սուրբ Ներսէս Շնորհալի շքանշանին: Ապա Սրբազան Հայրը շքանշանները ազուցեց մեծարուած գոյգին



Գերշ. Սրբազան Հայրը Սուրբ Ներսէս Շնորհալի շքանշանը կ'ազուցէ մեծարեալ Տիար Յրաչ Սիմոնեանի լամբակին

լամբակներուն ու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառի Սրբատառ Կոնդակը յանձնեց անոնց:

Եկեղեցական արարողութենէն ետք Առաջնորդարանի Դահլիճին մէջ մեծարեալ գոյգը ընդունեցին շնորհաւորութիւնները իրենց հարազատներուն եւ բարեկամներուն:



Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պետական ներկայացուցիչներ եւ հաւատացեալ ժողովուրդը կը հետեւին Ս. Ծննդեան Պատարագին



Սրբազան Հայրը անդրադարձաւ Տիար Հրաչ Սիմոնեանի գաղութէն ներս ունեցած գործունեութեան ու դրուատեց անոր եկեղեցասէր արարքը:

Արդարեւ 2008-ին ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ «Պատուոյ Ատենապետ» տիտղոսին արժանացած Տիար Հրաչ Սիմոնեան ունեցած է երկարամեայ բեղուն գործունեութիւն ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐԸՆ ներս: Աւելի քան 24 տարի անդամակցած է Գահիրէի Թեմական Ժողովին եւ պարբերաբար եղած է Գահիրէի Բաղաքական Ժողովի ատենապետ:

Շրջան մը ան անդամակցած է նաեւ ՀԱԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին:

Տիարը Վիվիան Սիմոնեան տարիներ շարունակ իր ամուսնոյն կողքին ծառայած է ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ գանազան գործունեութիւններուն, որպէս անդամ մարզարանի վարչութեան կողքին գործող Տիկնանց Յանձնախումբին:



Առաջնորդ Սրբազան Հայրը, ՀՀ Դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեանի (աջէն առաջինը) եւ Եգիպտոսիայի Նախկին շքանշանակիրներ ծախէն աջ՝ Տոքթ. Սուրբէն Պայրամեանի, Գահիրէի Թեմական Ժողովի ատենապետ Տիար Անդրանիկ Մեսրոպեանի, մեծարեալ գոյգին՝ Տէր եւ Տիկնն Հրաչ Սիմոնեանի եւ Տիար Վարդ Ալեքսանեանի հետ

Այս առթիւ կը շնորհաւորենք մեծարեալ գոյգը, իրենց մաղթելով առողջ տարիներ եւ յուսալով, որ իրենց արարքը կ'ըլլայ օրինակելի եւ վարակիչ նոր սերունդին մօտ:

«Տ»

ՍՈՒՐԲ ԵՆԲՐԱԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ ԾՔԱՆՇԱՆ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՐԱՍՏԱՌ-ԿՈՆԴԱԿ ՏԻԱՐ ՅԱԿՈՒՔ ՓԻՆՏԱՐԵԱՆԻ

ՀԱԸՄ-ի Պատուոյ Անդամ, Նախկին Աղեքսանդրահայ, այժմ Գալիֆորնիաքնակ Յակոբ Փիանտարեան, ի փառս Ա.Էջմիածնի անսասանութեան, ՀԱԸՄ-ի ազգանուէր ներդրումներու իրականացման եւ ազգային ու հասարակական երկարամեայ բեղուն գործունեութեան համար արժանացած է Ա.Սերսէս Շնորհալի Շքանշանին եւ Հայրապետական Սրբատառ Կոնդակի:

Սրբատառ Կոնդակի ընթերցումն ու Շքանշանի տուչութիւնը տեղի ունեցած է Կիրակի, 3 Հոկտեմբեր 2010-ին, Ա.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ մատուցուած Սուրբ եւ Ամմահ Պատարագի ընթացքին: ՀԱԸՄ-ի Կլէնտէյլ եւ Փասատինայի Մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, որուն ատենապետութիւնը վարած է մեծարեալը, նոյն օրը մեծարանքի հանդիսութիւն մը տեղի ունեցած է, ՀԱԸՄ-ի Փասատինայի Մասնակեան Կեդրոնի Պոյաճեան սրահին մէջ, որուն ընթացքին տեղի ունեցած է գեղարուեստական յայտագիր, մեծարեալին ուղղուած են դրուատանքի ու շնորհաւորական խօսքեր, ընթերցուած են շնորհաւորական գիրեր եւ ցուցասահիկներով ներկայացուած են շքանշանակիրին կեանքէն զանազան դրուագներ:

Կը շնորհաւորենք ՀԱԸՄ-ի մեծարեալ Պատուոյ Անդամ Յակոբ Փիանտարեանը եւ կը մաղթենք իրեն ուժ եւ կորով շարունակելու իր ազգանուէր գործունեութիւնը:

«Տ»



ՏԻԱՐ ՊԵՐՃ ԹԵՐԶԵԱՆԻ «ՅԵՏԱՊԱՐԶ ԱՆՊՐԱՎԱՐԶ» ՀԱՏՈՐԻՆ ՇՆՈՐՀԱՆԳԷՍԸ



Ձախեն աջ՝ Գերշ. Ս. Աշոտ Եպս. Մնացականեան, Տիար Պերճ Թերզեան եւ ԶԶ Դեսպան Տոքթ. Արմեն Մելքոնեան «Յետադարձ Անդրադարձ» հատորին գինիով հեղման պահուն

Կիրակի, Նոյեմբերի 21-ի երեկոյեան ժամը 7:00-ին ԶԶ Դեսպանութեան մասնաւոր հրաւերով դեսպանատան հիւրընկալ պարտեզին մէջ հաւաքուած էին Եգիպտահայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Աշոտ Ս. Եպսկ. Մնացականեան եւ իր հօտին մէջ գործող հոգեւոր հովիւներ եւ ազգային կառոյցներու հանգամանաւոր անձերէն շատեր, ԶԲԸՄ-ի եւ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ շրջանակէն ներկայացուցիչներ եւ հատորի հեղինակին բարեկամները:

Առիթը՝ Գահիրէի մէջ ԶԶ Դեսպանութեան կազմակերպած շնորհանդեսն էր Գահիրէի ԶԲԸՄ-ի Պատուոյ Ատենապետ՝ Տիար Պերճ Թերզեանի 2010-ին լոյս տեսած՝ «Յետադարձ Անդրադարձ» Յօդուածներու, Ելոյթներու, Զարգազրոյցներու եւ Ուսումնասիրութեան ժողովածոյին:

Խմիչքներու եւ խորտիկներու սպասարկումէն ետք, սկիզբ առաւ արդէն իսկ Զայաստանի եւ Սփիւռքի մամուլին մէջ անդրադարձ գտած «Յետադարձ Անդրադարձ» հատորին շնորհանդեսը, որուն լոյս ընծայման մասին տեղեկացուցած էինք «Տեղեկատու»ի մեր Նախորդ թիւով:

ԶԶ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Տոքթ. Արմեն Մելքոնեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն, ապա անդրադարձաւ հատորին բովանդակութեան, որոնց մէջ ըսաւ ան, ոչ միայն կ'արծարծուին գաղութային եւ համահայկական այնպիսի երեւոյթներ որոնք պէտք ունին անհրաժեշտ եւ արագ լուծումներու, այլեւ յաճախ տրուած են զանոնք լուծել փորձելու միջոցներ: Զատորը անկասկած կարելոր ներդրում մըն է Եգիպտահայ գաղութի ներկայ ժամանակաշրջանին համար, երբ հազուադէպօրէն կարելի է գտնել հայերէնով արտայայտուող տաղանդ, ձիրք եւ ըմբռնում ունեցող հեղինակներ: Յարգարժան Դեսպանը գովաբանեց Նաեւ հատորին խորքն ու խորաթափանցութիւնը:

Ապա ելոյթ ունեցաւ Սրբազան Զայրը, որ անդրադարձաւ հեղինակին գաղութն ներս՝ գաղութային կառոյցներու մէջ Տիար Պերճ Թերզեանի ունեցած բեղուն եւ արգասաբեր գործունեութեան:

Զակիրճ ելոյթով մը Տիար Պերճ Թերզեան շնորհակալութիւն յայտնեց ԶԶԴեսպանին, Սրբազան հօր եւ բոլոր ներկաներուն որոնք իրենց ներկայութեամբ պատուեցին զինք: Ապա, համաձայն հայկական աւանդութեան ընթացք առաւ նոր հրատարակուած գիրքը գինիով հեղելու արարողութիւնը:

Աւարտին՝ ներկաներէն փափաքողներ ունեցան իրենց հատորները:



ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ 2009-2010 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԳՎՀԻՐԷԻ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ



2009 - 2010 տարեշրջանի գերազանցիկ ուսանողները

Չորեքշաբթի 8 Դեկտեմբեր 2010ին, Գահիրեի ՅՍԸՄ ՆՈՒՊԱՐ ակումբին մեջ, տեղի ունեցավ պատուասիրություն եւ պարգևատուություն ի պատիւ համայնքի այն ուսանողներուն՝ որոնք փայլուն յաջողութեամբ ավարտած էին 2009-2010 դպրոցական տարեշրջանը:

Այս ձեռնարկը կը կազմակերպուի 2001 թուականէն ի վեր, Միութեանս Չագըր Ֆոնտին շնորհիւ, խթանելու համար համայնքիս գաւակները որ բարձր արդիւնքներու ձգտին, եւ միաժամանակ գնահատելու՝ անոնց տարած հետեւողական լուրջ աշխատանքն ու ձեռք բերած պատուաբեր արդիւնքները:

Երեկոյթը սկսաւ Գահիրեի ՅԲԸՄ-ի ատենապետ՝ Տոքթ. Վիգէն Ճիգմեճեանի բացման խօսքով: Ան շնորհաւորեց ուսանողները

իր իրենց իրագործած յաջողութիւններուն համար եւ յորդորեց՝ որ յարատեւ աշխատանքով անելի եւս բարձրանան, իրենց կարողութիւնները ի սպաս դնեն թէ իրենց ընտանիքին եւ թէ իրենց համայնքին եւ պատիւ բերեն իրենց ծնողքին, ազգին ու հայրենիքին:

Ապա ցուցադրուեցաւ 30 վայրկեան տեւողութեամբ տեսերիզ մը, ՅԲԸՄ-ի հովանաւորութիւնը վայելող «Նորքի Յայրորդաց Տուն»ի Երեւանի տաղանդաւոր, երիտասարդ արուեստագետներու ելոյթներէն, որմէ ետք վարչականներու ձեռամբ, այս տարեշրջանի տասներկու գերազանցիկ աշակերտները ստացան իրենց յատուկ վկայականներն ու մրցանակները:

Շնորհաւորութիւններ Բոլորին:

Թրգմ.Ա.Ճ.



Տիար Գեորգ Աւանես կը յաճնէ Ճուլիա Աւանեսիկի մրցանակը



Տիար Օննիկ Պըլըքտանես կը յաճնէ Ռիթա Կոտորչեանի մրցանակը



Տըքթ. Վիգէն Ծիզմէճեան կը յաճնէ Մանէ Ծիզմէճեանի մրցանակը



Տիար Մարտիկ Պալաեան կը յաճնէ Յակոբ Աւանեսիկի մրցանակը



Տըքթ. Վիգէն Ծիզմէճեանի ձեռամբ Ասիէ Ծիզմէճեան կը ստանայ իր մրցանակը



Տիար Մարտիկ Թերզիպաշեան Ալիս Մազլումեանի մրցանակը յաճնած պահուն



Տիար Միսաք Զէչճէնեան Ժորժ Կիրիլևիչեանի մրցանակը յանձնած պահուն



Տիար Պերճ Զէչճէնեան Կարօ Աւանեսիկի կը յանձնէ մրցանակը



Տիար Յակոբ Գարակեօզեան կը շնորհաւորէ Տիկին Սիւզի Գարգուրը եւ անոր կը յանձնէ իր գաւակներուն Յարօ եւ Արբէն Գարգուրներու մրցանակները

2. Նախակրթարան

Ճուլիա	Գերոգ	Աւանտան	96.88%
Ռիթա	Գերոգ	Կոտլոյշեան	96.3%
Մանէ	Վիգէն	Ճիգմեճեան	92.3%

Գ. Պատրաստական

Ասփէ	Վիգէն	Ճիգմեճեան	93.8%
Յակոբ	Պերճ	Ասլանեան	91.4%

Յամայսարան

Դալար	Վահէ	Պէնօհանեան	Գերազանց
Նանօր	Սահակ	Զօհրապեան	Գերազանց
Ժորժ	Յակոբ	Կիրիլնիլեան	Գերազանց
Կարօ	Պերճ	Ասլանեան	Գերազանց
Ալիս	Շահէն	Մազլումեան	Շատ Լաւ
Յարօ	Լիպարիտ	Գարգուր	Շատ Լաւ
Արբէն	Լիպարիտ	Գարգուր	Շատ Լաւ



ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ ԱՂԵ-ՔՍԱՆԳՐԻՈՅ ԳՐԱԳՐԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Եգիպտոսի «Animation» Ֆիլմերու միջազգային կազմակերպության հրավերով, Գահիրե ժամանած էին Երեւանի «Re Animania» միջազգային Ֆիլմերու տնօրեն՝ Վրեժ Քասունի եւ իր երկու գործընկերները՝ ներկայացնելու համար «Animation»-ի մարզէն ներս հայկական Ֆիլմերու արձանագրած յառաջդիմութիւնը: Անոնց Եգիպտոս կեցութիւնը ապահոված էին Գահիրեի Ազգային Առաջնորդարանն ու Գահիրեի ԶԲԸՄ-ը:



28 Նոյեմբեր 2010-ին, Աղեքսանդրիոյ հռչակաւոր գրադարանին մէջ, պատկերասփռուեցաւ վերջին 75 տարիներուն ընթացքին Հայաստանի մէջ պատրաստուած, շարժուն գծագրանկարներու (dessins anime's) Ֆիլմերէն ընտրանի փունջ մը, եգիպտացի թէ եգիպտահայ հոծ բազմութեան մը ներկայութեան:

Սոյն պատկերասփռումը բարեպատեհ առիթը ընծայեց, որ խօսուի հայոց մասին եւ այն ազդեցութեան՝ զոր անոնք ունեցած են եգիպտական շարժանկարի ճարտարարուեստին մէջ: Այս առթիւ ցուցադրուեցաւ քսան վայրկեան տեւողութեամբ վաւերագրական ժապաւէն մը, լուսնկարչական գործիքներու վարպետ՝ եգիպտահայ հանրածանօթ «Օհան»-ի մասին, որ 1940էն մինչեւ 1980ական թուականները, մեծ զարկ տուած է եգիպտական շարժանկարի ճարտարարուեստին զարգացման:

Պատկերասփռումէն յետոյ, Պր. Քասունի եւ Եգիպտոսի «Animation» Ֆիլմերու միջազգային կազմակերպութիւն» ի նախագահ՝ Պր. Սոհամետ Ղազալա ներկաներուն հետ քննարկած են հայկական «Animation» շարժանկարներու վերաբերեալ հարցեր: Անոնք խօսակցած են նաեւ եգիպտացի եւ հայ արուեստագետներու միջեւ հիմէն ի վեր գոյութիւն ունեցող սերտ գործակցութեանց եւ բարեկամական յարաբերութեանց մասին:

Վրեժ Քասունի - Ծանօթացում

Ճանաչու է Սուրիա: Աւարտած է Հալէպի ԶԲԸՄ-ի Լազար Նաճարեան - Գալուստ Կիւլպէնկեան վարժարանը: Հետեւած է Հալէպի ԶԲԸՄ - ՀԵԸ-ի «Սարեան Ակադեմիա»-ի դասընթացքներուն, ապա մեկնած է Երեւան՝ ուր յաճախած է Թերլեմէզեանի անուան գեղարուեստից ուսումնարանը: Աւարտելէ յետոյ, հետեւած է Անգլիոյ Պրիսթոլի «Animation»-ի եռամսեայ դասընթացքներուն ապա վերադարձած՝ Երեւան:

Վրեժ Քասունի իր գծանկարներով աշխատակցած է հայրենիքի թէ արտասահմանի բազմաթիւ թերթերու եւ ամսագրերու ու պատկերագրողած՝ աւելի քան տասը մանկական գիրքեր:

2001-ին ան հիմնած է իր անհատական «Animation»-ի արուեստանոցը՝ «KASSart»ը եւ մասնագիտացած՝ «Animation» Ֆիլմերու եւ ծանուցումներու մէջ: Ան նաեւ հեղինակ է շարք մը տիկնիկային Ֆիլմերու:

Վերջերս, Հայաստանի Ազգային Կինոկերպարանին հետ, արտադրած է «Animation» վաւերագրական սոր ժապաւէն մը՝ ներկայացնելով Սիպերիան, որ արժանացած է երեք մրցանակներու, նիւթին իր իւրայատուկ մօտեցման համար:

«KASSart»-ի ձգտումն է առաջնակարգ արտադրական կազմակերպութիւն մը դառնալ:

Թրգմ. Ա.Ճ.



ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՎԱՀԷ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԿՏԱԲՆԵՐՈՒՆ ՑՈՒՑԱՀԱՆԳԷՍԸ



Շաբաթ, 11 Դեկտեմբեր 2010-ի երեկոյեան Զելիոպոլսոյ Կոկանեան Սրահին մէջ տեղի ունեցաւ արուեստագետ Վահէ Վարժապետեանի միօրեայ անհատական ցուցահանդէսը:

Վերջին 40 տարիներու եգիպտահայ արուեստի պատմութեան մէջ Վահէ Վարժապետեան ծանօթ դեմք մըն է, որ յաճախ կը ցուցադրէ նորաստեղծ գործերը:

Ան այս անգամ ցուցադրած էր տարբեր չափերու 15 իւղանկարներ, որոնք «Կենդանական Աշխարհ» Էն կարգ մը ներկայացուցիչներ կը պատկերէին: Կտաները բոլորն ալ կատարուած էին ազատ ու համարձակ վրձինով մը, որ միշտ բնութագրած է արուեստագետին ոճը:

Բաղդատած իր նախորդ՝ 8 Նոյեմբեր 2003-ին Կոկանեան Սրահին մէջ կայացած իր ցուցահանդէսին՝ որուն սիւթը «Ծաղիկներու Աշխարհ»ն էր, այս վերջինին նորութիւնը իր արուեստին մէջ նախապէս չմշակուած սիւթի նորութիւնն էր եւ կատարողական աւելի մեծ համարձակութիւնը:

Վահէին կը մաղթենք ստեղծագործական նորանոր յաջողութիւններ:

Նշենք՝ թէ Վահէ Վարժապետեան ծնած է 1951-ին Գահիրէ: Աւարտած է Գալուստեան Ազգային Վարժարանը: Աշակերտած է եգիպտահայ նշանաւոր նկարիչներ Աշոտ Չօրեանի, Բիւզանդ Կոճամանեանի եւ Նորա Իփէքեանի:

Գահիրէի Լեոնարտօ Տա Վինչի Արուեստի Ակադեմիան աւարտելէ ետք, իր առաջին ցուցահանդէսը տուած է ԳԱՎ - ի Գառզու ցուցասրահին մէջ:

Ան ցուցահանդէսներ տուած է նաեւ Գահիրէի, Աղեքսանդրիոյ, Պէյրութի եւ Մոնրեալի մէջ:

«Տ»



Չախեն աջ՝ Արուեստագետներ Զրանդ Բէշիշեան, Վահէ Վարժապետեան եւ ԶԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի ատենապետ Տոթթ. Վիզէն Ճիզմէճեան



ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԻ Դ ՓԱՌ-ԱՏՕՆԻՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի, 16 Ղեկտեմբեր 2010-ի երեկոյեան, Ղպտի Եկեղեցւոյ նախկին Պատրիարքարանի Ս. Մարկոս եկեղեցւոյ մէջ, տեղի ունեցաւ Գահիրէի մէջ գործող Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր երգի միջ համայնքային 4-րդ փառատօնը, նուիրուած՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան, կազմակերպութեամբ եւ հովանաւորութեամբ Շնուտա Գ. Պատրիարքին:



Փառատօնի կազմակերպիչ Ռաֆայէլ Եպիսկոպոս եւ Եգիպտոսի Յայոց Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Սրբ. Եպիսկոպոս Մնացականեան ելոյթի պահուն

Ինչպէս նախորդ փառատօններուն, չորրորդ միջ-համայնքային այս փառատօնին հայ համայնքը մասնակից կ'ըլլար, գլխաւորութեամբ Եգիպտոսի Յայոց թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Սրբազան Եպիսկոպոս Մնացականեանի եւ ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Գաբրիէլ Աբեղայ Սարգսեանի, Գահիրէի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Յակոբ Քինյ. Յակոբեանի եւ Բարեշն. Ռաֆֆի սարկաւազ Պօղոսեանի: Ներկայ էին նաեւ հայ համայնքի անդամներ:

Բացման հանդիսաւոր արարողութիւնը կատարուեցաւ Ս.Մարկոս եկեղեցւոյ շրջաբակին մէջ, երբ մասնակից բոլոր եկեղեցիներու պետական դրօշները բարձրացուեցան եւ ազգային քայլերգները հնչեցին: Այնուհետեւ յաջորդաբար ելոյթ ունեցան Երիթրիայի, Յոյն, Եթովպիոյ եւ Հայ եկեղեցիներու եւ հուսկ՝ հիւրընկալ Ղպտի Եկեղեցւոյ երգեցիկ խումբերը:

Այս տարի, Գահիրէի Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչաբումբը (խմբավար՝ Սօ. Միհրան Ղազէլեան) կը մասնակցեր իր մենակատարներու կազմով:

Ս.Ծննդեան նուիրուած փառատօնի արաքսեան այս տարուայ երգացանկը կազմուած էր ոչ միայն հոգեւոր եկեղեցական երգերէ, այլ նա-

եւ հոգեւոր ժողովրդական: Սուրբ Ծննդեան տօնը ամենասիրուած ու ամենաժողովրդական եկեղեցական տօնը եղած է մեր ժողովրդի մէջ, հետեւաբար, գեղարուեստական բարձր արժանիքներով հոգեւոր ժողովրդական երգերը պատկառելի թիւ կը կազմեն մեր երաժշտական գրականութեան մէջ: Այդպիսի երեք բացառիկ նմոյշներ ներկայացուեցան, որոնք այսօրուայ մեր լայն երաժշտասեր հանրութեան գրեթէ անծանօթ են: Այդ երգերը (Տիրամօր Գովքը, Աւետիս եւ Ծառ Մի Կանչեր) ներկայացուեցան երգչախումբի կրտսեր անդամներուն կողմէ:

«Տիրամօր Գովքը» երգով հանդես եկաւ Վարդուհի Արթինեան, Ռուբէն Սաատ կատարեց «Աւետիս» եւ «Ծառ Մի Կանչեր» երգերը: Այս հանդես եկան Գոհար Ղազէլեան «Այսօր Տօն է Սուրբ Ծննդեան» շարականով, իսկ Սիլվա Թերզիպաշեան «Ինկի Ծառի Նման Ես» տաղով: Ինչպէս նախորդ փառատօնին, այս



«Արաքս» երգչախումբի մենակատարներ Ռուբէն Սաատ, Տիկին Սիլվա Թերզիպաշեան, Տիկին Գոհար Ղազէլեան եւ ետեւը՝ Վարդուհի Արթինեան

տարի եւս Հոգշ. Տ. Գաբրիէլ Աբղ. Սարգսեան իր մասնակցութիւնը բերաւ համերգին, այս անգամ՝ «Ով Չարմանալի» շարականով:

Կատարումները հնչեցին Յակոբ Մազլումեանի երգեհոնային նուագակցութեամբ: Բոլոր ելոյթ ունեցողները դիմաւորուեցան ջերմ ծափողոյններով:

Երգերու կատարումներէն ետք հանդիսութեան եւ Ս.Ծննդեան մասին Առաջնորդ Սրբազան Հօր խօսքը արաբերէն լեզուով ընթերցեց Դոկտ. Ճորճ Սիմոնեան:

Ելոյթի ավարտին փառատօնի կազմակերպիչ Ռաֆայէլ Եպիսկոպոս Հայ Համայնքին եւ անոր Առաջնորդին եւ ելոյթի մասնակիցներուն ուղղած յատուկ շնորհաւորական խօսքէն ետք



ՏՈՒՐԹ. ԵԳՈՒԱՐԳ ԳՎՆԻԷԼԵԱՆԻ ԳՎՍԱԽՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳՎՀԻՐԷԻ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅ ՄԷՋ

Գահիրեի Համալսարանի Բանասիրական Հիմնարկի Հայագիտական Ուսումնասիրություններու Կեդրոնին հրավերով, 2010-ի Նոյեմբեր 22-27 Գահիրեի եւ Ադեքսանդրիոյ մէջ դասախօսութիւններով հանդէս եկաւ Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի հնագոյն պատմութեան բաժնի վարիչ, պատմական գիտութիւններու Տոքթ. Փրոֆ. բազմաթիւ պատմագիտական եւ պատմաշխարհագրական աշխատութիւններու հեղինակ Տոքթ. Եղուարդ Դանիելեանը:

Առաջին դասախօսութիւնը տեղի ունեցաւ Գահիրեի Համալսարանի Հայագիտական Կեդրոնին մէջ, 22 Նոյեմբերի առաւօտեան ժամը 11-ին: Դասախօսութեան նիւթն էր՝ «Հին տիեզերական տեսութիւնները հայկական եւ արաբական սկզբնաղբիւրներու մէջ», իսկ երկրորդը՝ Նոյեմբեր 24-ին, Եգիպտական Պատմագիտական Կեդրոնին մէջ (Նասր Սիթի), որուն նիւթն էր, «Հին եւ միջնադարեան աշխարհը՝ ըստ միջնադարու հայ եւ արաբ աշխարհագետներու:

Այս երկու դասախօսութիւնները տրուեցան անգլերէն լեզուով մեծամասնութեամբ արաբ եւ օտար ունկնդիրներու ներկայութեան, որոնցմէ շատեր դասախօսութեան ավարտին իրենց հետաքրքրութիւնը յագեցուցին իրենց տուած հարցումներուն մասին սպառնիչ տեղեկութիւններ ստանալով:

Գահիրեաբնակ հայութիւնը յարգելի դասախօսը հայերէն լեզուով ունկնդրելու առիթը ունեցաւ, Նոյեմբեր 26-ին, Հելիոպոլսոյ Պըլըքտանեան հանդիսասրահին մէջ:



Դասախօսը ելոյթի պահուն

Նախքան դասախօսութիւնը, Եգիպտոսի մօտ ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեան ամփոփ կերպով ներկայացուց հիւր դասախօսը, որմէ յետոյ ներկաները մօտ մէկ ժամ հետաքրքրութեամբ ունկնդրեցին զայն, որ մանրամասնութեամբ ներկայացուց դասախօսութեան նիւթը՝ «Մետաքսի ճանապարհի ճիւղաւորումները Արեւմտեան Ասիայի՝ Մեծ Հայքի եւ Կիլիկիայի Հայկական Թագաւորութիւններու ժամանակաշրջանին»: Աւարտին՝ եղան հարցումներ որոնք յաւելեալ գիտելիքներ պարգեւեցին ներկաներուն:

Նոյն նիւթով յարգելի Փրոֆեսսօրը իր վերջին ելոյթը ունեցաւ Նոյեմբերի 27-ին, Ադեքսանդրիոյ Ազգային Առաջնորդարանի Մելքոնեան սրահին մէջ:

յուշանուէր մը յանձնեց Սրբազան Հօր եւ ապա փոքրիկ յուշանուէրներ՝ ելոյթ ունեցողներուն:

Առաջնորդ Սրբազան Հայրն ալ մեր Եկեղեցւոյ կողմէ որպէս յիշատակ՝ Հայաստանէն բերուած փայտեայ գեղեցիկ խաչ մը նուիրեց Ռաֆայէլ Եպիսկոպոսին:

Հանդիսութեան առիթով կազմակերպիչները պատրաստած էին գրքոյկ մը, որ կը ներկայացնէր մասնակից երգչախումբերու երգացանկը եւ երգերուն բանաստեղծական խօսքերը՝ բնագրային լեզուով, անգլերէն եւ արաբերէն թարգմանութիւններով: Տպուած էր նաեւ բոլոր մասնակից եկեղեցիներու պատմութիւնը ներկայացնող արաբերէն եւ անգլերէն լեզուներով գիրք մը:

Հանդիսութենէն ետք բոլոր ելոյթ ունեցող երգչախումբերու մասնակիցները հիւրասիրուեցան կազմակերպիչ Ղպտի Եկեղեցւոյ կողմէ:

Սրբազան Հայրը մասնակցեցաւ նաեւ ւանդական ընթրիքին, ի ներկայութեան հոգեւոր դասի, ուր շնորհակալութիւն յայտնեց Ռաֆայէլ Եպիսկոպոսին հերթական սոյն ձեռնարկին համար, ինչպէս նաեւ կազմակերպիչներուն եւ ընդունելութիւնը կազմակերպած «Տիկնանց Յանձնախումբին»:

Դիւան
Գահիրեի Ազգային Առաջնորդարանի



ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ

Հայ Գեղարուեստասիրաց Միութեան Վահան Թեքեան Երիտասարդաց Յանձնախումբը այս տարի եւս Սուրբ Ծննդեան Հրաշափառ Տօնին առթիւ կազմակերպեց ավանդական Երիտասարդական Փառատօնը, հովանաւորութեամբ Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Սրբազան Եպսկ. Մնացականեանի եւ նախագահութեամբ Գահիրէի Թեմական Ժողովի ատենապետ Տիար Անդրանիկ Մետրոպեանի եւ իր ազնուափայլ տիկնոջ:

ՀԳՄիութեան ատենապետ՝ ողբացեալ Գրիգոր Մարգարեանի մահէն ետք այս առաջին ձեռնարկին բացման խօսքը կատարեց ՀԳՄ-ի Վարչականներէն Տիար Շահէն Մազլումեան: Իր բացման խօսքին մէջ ան նշեց, թէ այսօր տխրութեան օր չէ մեզի համար, քանզի ողբացեալին սիրած գործը կը շարունակուի: Ապա ան բեմ հրաւիրեց Սրբազան Հայրը իր ողջոյնի խօսքը ուղղելու: Սրբազան Հայրը նախ խնդրեց ներկաներէն մէկ վայրկեան յոտընկայս լռութեամբ յարգել յիշատակը հանգուցեալին եւ ապա անդրադարձաւ անոր աւելի քան տասնամեակ մը ՀԳՄիութենէն ներս տարած աշխատանքին, որուն արդիւնքին ականատեսը կ'ըլլանք այսօրուայ փառատօնին կայացմամբ: Մենք վստահ ենք որ այդ գործը պիտի շարունակուի իրեն յաջորդողներու շնորհիւ եւս:

Սրբազան Հօր ելոյթէն ետք, հանդիսավար Անի Պօղոսեան յաջորդաբար բեմ հրաւիրեց օրուան գեղարուեստական յայտագրին մասնակիցները:

ՀԲԸՄ-ի «Ծիածան» Մանկական Երգչախումբը Սօ. Միհրան եւ խմբավար Գոհար Ղազէլեաններու ղեկավարութեամբ կատարեց «Ով Տէր Աստուած» աղօթքը, որմէ ետք ներկայացուց ամանորեան երգերու փունջ մը:

Յուսաբեր Երիտասարդական Միութիւնը ներկայացաւ երգով՝ «Կենաց Հայերին» Մկրտիչ Աւետանեան եւ մենապարով՝ «Յուշեր» Նորա Էտուարի կատարմամբ:

Կոկանեան Սրահի «Չանգեզուր» պարախումբէն Բերլա Աւանեան հանդէս եկաւ «Ծի-

րանի Ծառ» պարով, իսկ Մարիան Արուսեան եւ Լուսի Սանճեան կատարեցին «Let it Snow» անգլերէն երգը:

Կ'առանձնացնենք Ռուբէն Սաատի եւ Վարդուհի Արթինեանի կատարումները: «Աւետիս» եւ «Տիրամօր Գովքը», երգեհոնի ընկերակցութեամբ Յակոբ Մազլումեանի:

Ծովինար Գազանճեանի, Արիազատ Գազանճեանի եւ Մետրոպ Ղազէլեանի կատարումները, յաջորդաբար կիթառ՝ Պախ-Կաւոթ 1 եւ 2 եւ Louys de Narvaege - guardam Las Vacas, Ղաշնամուր՝ Debussy - Prelude եւ ջութակ՝ Concert ci minor, Ղաշնամուրի ընկերակցութեամբ Սօ. Միհրան Ղազէլեանի:

Պէտք է ըսել թէ ելոյթ ունեցող այս հինգ պարման - պարմանուհիներու կատարումները տարուէ տարի յառաջդիմութիւն կ'արձանագրեն ուրախացնելով եւ մղելով մեզ յոյսով սպասել ապագային, ունենալու Երիտասարդ եւ առաւել գեղեցիկ կատարումներով մշակութային ձեռնարկներ գաղութէն ներս, գաղութային ուժերով:

Հայ Գեղարուեստաց Միութեան Թեքեան Երիտասարդաց Յանձնախումբի արդէն այլեւս Երիտասարդ դարձած Յակոբ Մազլումեանի դաշնամուրի ինքնագիր ստեղծագործութեան կատարումը եղաւ օրուայ յայտնութիւնը եւ արժանացաւ որոտընդոստ ծափահարութիւններու:

Փնտռուած դաշնակահարուհի Օր. Արփի Ճանիկեանն է դարձեալ, դաշնամուրին առջեւ նստած ինքնավստահ: Ան այս տարի մեզի հրամցուց Շոփէնի «Nocturne»-ը եւ Բարխուդարեանի «Աղջկայ Պար»-ը իր ինքնուրոյն մեկնաբանութեամբ:

Փառատօնին գեղարուեստական բաժինը աւարտեցաւ Հոգշ. Տ. Գաբրիէլ Աբեղայ Սարգսեանի Կոմիտասի «Լռեց» երգին կատարմամբ: Առնական ու թաւ ձայնով գեղեցիկ կատարումը մեզ փոխադրեց անցեալի փառատօններու գեղարուեստական յայտագիրներու երկրորդ բաժնին, որու ընթացքին ելոյթ կ'ունենային այլ գաղութներէ հրաւիրուած արհեստավարժ կատարողներ:

Սրբազան Հօր գնահատական ելոյթով եւ



աղօթքով աւարտեցաւ «Երիտասարդական Փառատօն» մը եւս:

Արդեօ՞ք այսօրուայ ելոյթ ունեցող պատանիները յառաջիկային երբ արդէն երիտասարդ եւ, պիտի մասնակցի՞ն ամենամեայ այս փառատօնին, արդարացնելու «Երիտա-

սարդական Փառատօն» անունը:

Շնորհակալութիւն կազմակերպիչներուն եւ բոլոր մասնակիցներուն:

«S»



ՀԳՄիութեան Երիտասարդական Փառատօնի մասնակիցները ծախէն աջ՝
 Ա շարք՝ Ռուբէն Սաատ, Բերլա Աւանես, Մարիան Արուսեան, Լուսի Սանճեան եւ Սկրտիչ Աւետանեան
 Բ շարք՝ Նորա Էտուար, ՀԲԸՄ-ի «ԾԻԱԾԱՆ» Մանկական Երգչախումբ, Մերոպ Ղազէլեան
 Գ շարք՝ Արիագատ Գազանճեան, Ծովինար Գազանճեան, Յակոբ Մազլումեան, Վարդուհի Արթինեան
 Դ շարք՝ Դոզ. Տ. Գաբրիէլ Աբեղայ Սարգսեան, Տիար Շահէն Մազլումեան, Օր. Արփի Ճանիկեան



ՀՄԸՄ ԱՐԱՐԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ-ՔԸ

Հինգշաբթի, 11 Նոյեմբեր 2010ին տեղի ունեցավ ՀՄԸՄ Արարատի պասքեթպոլի տարեկան մրցաշարքը հովանավորությամբ՝ Եգիպտոսի Հայոց Առաջնորդ՝ Գերաշնորհ Աշոտ Սրբազան Եպիսկոպոս Մնացական-եանի եւ նախագահությամբ՝ Տեր եւ Տիկին Պերճ Յովակիմեանի: Մրցաշարքին պատուոյ հիւրն էր Եգիպտոսի մօտ Հայաստանի Հանրապետութեան Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեան:

Օրուան առաջին մրցումը ՀՄԸՄ Արարատի եւ Ադեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներու խումբերուն միջեւ էր: Հակառակ որ Ադեքսանդրիոյ խումբը միայն 8 մարզիկուհիներով կը մասնակցէր մինչ Արարատի խումբը 13 մարզիկուհիներ ուներ, խաղը գրեթէ հաւասար կ'ընթանար եւ Արարատի խումբը մեծ դժուարությամբ կարողացաւ յաղթել 39-34 արդիւնքով ու ստացաւ Տեր եւ Տիկին Զերիմ Միտիկեանի նուիրած բաժակը: Մրցումը դիտած ժամանակս, հարց կուտայի ես ինձի, թէ քանի որ Արարատը 13 հոգինոց աղջիկներու խումբ ունի, ինչո՞ւ ամէն անգամ որ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութիւնը հրաւիրէր զանոնք մրցելու ակումբի աղջիկներու խումբին դէմ, զանազան պատճառաբանութիւններով կը խուսափէին այդ հանդիպումներէն:

Օրուան երկրորդ մրցումը Գահիրէի եւ Ադեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ներուն միջեւ էր: Մրցումին սկիզբը արձանագրուած կետերուն տարբերութիւնը քիչ էր, սակայն Գահիրէի ՀՄԸՄի տղաքը հետզհետէ իրենց խսկական խաղարկութիւնը ցուցաբերեցին ու մրցումը ււարտեցաւ 82-33 արդիւնքով:

Օրուան վերջին մրցումը՝ ՀՄԸՄ Արարատի եւ ՀՄԸՄ Կամքի միջեւ ււարտեցաւ ի նպաստ Արարատին 66-46 արդիւնքով:

Ուրբաթ, 12 Նոյեմբերի առաջին մրցումը ՀՄԸՄ Արարատի 16 տարեկանէն վար տղոց ու Հելիոլիտոյի համապատասխան խումբին միջեւ էր: Արարատի պատանիները շատ լաւ խաղարկությամբ յաղթեցին 101-44 արդիւնքով ու ստացան Տեր եւ Տիկ. Շանթ Կապեանի նուիրած բաժակը:

Յաջորդ մրցումը Արարատի տղոց եւ Թայարանի մինի-պասքեթի խումբերուն միջեւ էր, որ բաւական տաք էր ու ււարտեցաւ մէկ կետի տարբերությամբ 30-29 ի նպաստ Արարատի փոքրիկներուն, որոնք ստացան Տեր եւ Տիկին Ռաֆֆի Միքայելեանի նուիրած բաժակը:

Օրուան վերջին մրցումը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Սրբուհի Թերեզայի խումբերուն միջեւ էր: Անհաւասար մրցումը վերջացաւ ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն 83-59 արդիւնքով:

Շաբաթ, 13 Նոյեմբերի յայտագրին վրայ եւս 3 մրցում կար: Առաջին մրցումին, ՀՄԸՄ Արարատի աղջիկներուն խումբը խաղաց Հելիոլիտոյի դէմ, պարտուեցաւ 44-36 արդիւնքով ու կորսնցուց Տիար Տրդատ Չօրապեանի նուիրած բաժակը:

Երկրորդ մրցումը Արարատի մինի-պասքեթի եւ Հելիոլիտոյի համապատասխան խումբերուն միջեւ էր: Արարատի նորահաս մարզիկները բաւական լաւ խաղարկությամբ յաղթեցին 42-23 արդիւնքով ու տիրացան Տեր եւ Տիկին Արա Զեօհնէլեանի նուիրած բաժակին:

ժողովուրդը անհամբեր կը սպասէր ււարտական մրցումին՝ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՀՄԸՄ Արարատի միջեւ: Նախքան մրցումին սկսիլը բոլոր ներկաները յոտնկայս յիշատակը յարգեցին Տօքթ. Նորայր Սիմոն-



եանին, նախկին մարզիկ եւ վարչական անդամ Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ, որ մահացած էր նախորդ օրը յետ երկարատեւ հիւանդութեան:

Մրցումը սկսաւ տաք ու ինչպէս միշտ , լարուած ջիղերով: Մինչ Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը արդէն իսկ տիրացած էին 2010ի երեք մրցաշարքերու բաժակներուն, Արարատի տղաքը որոշած էին գէթ իրենց դաշտին վրայ կայացած մրցաշարքին բաժակը ձեռք ձգել: Արդիւնքը գրեթէ հաւասար կ'ընթանար, պասքէթ մը հոս պասքէթ մը հոն , մինչեւ որ 3րդ քառորդախաղի վերջաւորութեան Արարատի տղաքը իրերայաջորդ յաջող պասքէթներով 10 թիւի առաւելութիւն մը ապահովեցին ու բաժակը իրենցը նկատել սկսան: Սակայն ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը 4րդ քառորդախաղը սկսան բոլորովին նոր խաղարկութեամբ մը ու իրենց յա-



ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ յաղթական խումբը պատասխանատուներու եւ քաջալերողներու հետ

ջող յարձակումներով շարունակեցին Արարատի խումբը: Ոչ միայն 10 կէտի տարբերութիւնը յաղթահարեցին, այլ 9 կէտի առաւելութեամբ յաղթական հանդիսացան: ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ համակիրներուն ծափահարութիւններուն ընկերակցութեամբ յաղթական տղաքը , առաջնորդութեամբ խմբապետ Կարօ Վարժապետեանի, ստացան մրցաշարքի բաժակը նուիրուած Տէր եւ Տիկին Լեւոն Քիւրքճեանի կողմէ: 2010ի բոլոր մրցաշարքերուն բաժակներուն տիրանալէ ետք Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը իրաւամբ կը հանդիսանայ եգիպտահայ խումբերու այս տարեշրջանի ախոյեանը:

Սօսի Ներետեան - Յակոբեան



ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԵՐԷՅ ՏՂՈՅ ԵՒ ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՊԱՍՔԷԹ-ՊՈՒԼԻ ԽՈՒՄՔԵՐԸ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Երկուշաբթի, 15 Նոյեմբեր 2010

Պեյրութի ՅԲԸՄ-ՅԵԸ «Անդրանիկ»-ի եւ Յայկազեան Յամլսարանի հրաւերով ու Գահիրէի ՅԲԸՄի աջակցութեամբ, ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երեց տղոց եւ աղջիկներու պասքէթպոլի խումբերը իրենց պատասխանատուներով ու մարզիչներով, ընդամենը 25 հոգի, մեկնեցան Պեյրութ բարեկամական մրցումներ խաղալու համար:

Ժամանակը զուգահիւսելով Ատհա տօնին առթիւ տրուած մէկ շաբթուայ արծակուրդին, ակումբին անդամներէն շատեր փափաք յայտնած էին միանալ այս պատուիրակութեան: Ուստի Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութիւնը

ժամը 6ին սկսաւ առաջին պտոյտը դէպի Յարիսա, ուր լերան վրայ կը գտնուի Լիբանանի պահապան Աստուածածնի հսկայ արծանը իրեն յարակից եկեղեցիով:

Իսկապէս որ գեղեցիկ էր տեսարանը. Պեյրութը անծայրածիր կը տարածուէր ու կը փայփլէր իր շողշողուն լուսավառութեամբ: Ընթրիքի համար խումբը առաջնորդուեցաւ ճամբուն վրայ գտնուող Best View ճաշարանը, ուր ներկաները հիւրասիրուեցան լիբանանեան համեղ ուտելիքներով:

Երեքշաբթի, 16 Նոյեմբեր 2010

Ըստ օրուայ ծրագրին, կանուխ նախաճաշէ



ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ St. Joseph Յամլսարանի տղոց պասքէթպոլի խումբերուն մարզիկները եւ պատասխանատուները

հնգօրեայ զբօսապտոյտ մը կազմակերպեց, որուն մասնակցեցան 40 հոգի:

Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիկներն ու զբօսաշրջիկները վայրէջք կատարեցին Պեյրութի օդակայանը կէսօրէ ետք ժամը 1ին ու այդ վայրկեանէն իսկ գործադրութիւնը սկսաւ ՅԵԸԻ եւ Յայկազեանի կողմէ մանրակրկիտ կերպով պատրաստուած պտոյտներու ծրագրին:

Օդակայան եկած էին պեյրութահայ երիտասարդներէն մի քանի հոգի, որոնք փոխնիփոխ իրենց ընկերներուն հետ տեսապէս հիւրերուն կ'ընկերակցէին պտոյտներու ժամանակ: Խումբին պատասխանատուներ, Գահիրէի ՅԲԸՄի Մասնաճիւղի ատենապետ Տոքթ. Վիգէն Ճիգմէճեանի եւ Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՅԲԸՄ-ի վարչական անդամ Տոքթ. Ճորճ Սիմոնեանի ուշադիր ղեկավարութեամբ խումբը անմոռաւալի օրեր անցուց Պեյրութի մէջ:

White Tower պանդոկ փոխադրուիլն ու սենեակներու կարգադրութիւնը եղաւ հեշտութեամբ ու մի քանի ժամ հանգիստէ ետք երեկոյեան

մը ետք, ժամը 8:30ին երկու հանրաշարժերը շարժեցան դէպի Չահլէ ուր ՅԲԸՄի պատկանող ակումբ մը կը գտնուի: Խումբին կ'ընկերակցէր ՅԵԸ-ի գործադիր տնօրէն Պր. Սանթուրեանը եւ ՅԵԸ-էն մի քանի երիտասարդ-երիտասարդուհիներ: Չահլէի ՅԲԸՄի ակումբը մի քանի յարկերէ կը բաղկանայ: Ունի հաւաքոյթի ընդարձակ սրահ, գոց մարզարան, գրասենեակներ ու բացօթեայ պասքէթ-պոլի դաշտ: Ակումբին տիկիները հիւրերուն համար փոքրիկ ընդունելութիւն մը պատրաստած էին: Մեկնելէ առաջ բոլորը միասին յիշատակի լուսանկարներ քաշուեցան: Չահլէի հռչակաւոր վազող ջուրերը այցելելէ ետք խումբը ուղղուեցաւ դէպի Անճար՝ հայոց գիւղը:

Իսկապէս որ իւրայատուկ երեւոյթ է Անճարը իր ամբողջովին հայ բնակիչներով: Գլխաւոր պողոտային վերջաւորութեան Ս. Պօղոս եկեղեցին կը գտնուի որուն շրջաբակին մէջ է հայկական դպրոցը ու Ապրիլ 24ի գոհերուն նուիրուած խաչքար յուշարձանը: Փողոցներուն անունները



հայկական են ու ցուցատախտակներուն վրայ հայերէն եւ արաբերէն գրուած է: Այս փոքրիկ, կոկիկ ու հայաշունչ գիւղը հիմնուած է Մուսա Լերան հերոսամարտէն ազատած ու հոն փոխադրուած գաղթականներուն կողմէ ու տակաւին շէն կը մնայ անոնց զաւակներուն ու թոռներուն շնորհիւ: Տեղոյն ամենանշանաւոր «Արեւ» ճաշարանին մէջ ախորժահամ ճաշ մը ուտելէ ետք, խումբը վերադարձաւ Պեյրուս պանդոկին մէջ քիչ մը հանգիստ ընելու, քանի որ երեկոյեան 7ին պասքէթ-պոլի մրցումները պիտի սկսէին:

Ժամը 6:15ին, Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներու խումբին 12 մարզիկուհիները, խումբին պատասխանատու Տիկին Սօսի Յակոբեան եւ մարզիչ Ալաա Չահրան ուղղուեցան դէպի ԶԲԸՄԻ ՏԵՄԻՐՃԵԱՆ կեդրոն, ուր պիտի խաղացուէր օրուայ բարեկամական մրցումը ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Զայկազեան Զամալսարանի խումբերուն միջեւ:



ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ԶԵԸ - ԱՆՂՐԱՆԻԿԻ աղջկանց պասքէթպոլի խումբերուն մարզիկուհիները եւ պատասխանատուները

բերուն միջեւ: Շատ հոյակապ կառոյց է ՏԵՄԻՐՃԵԱՆ կեդրոնը իր մարզասրահներով, պարի սրահով, ցուցահանդէսներու համար ամէն տեսակի յարմարութիւններով օժտուած տարածութեամբ, ժողովասենեակներով, գրասենեակներով, 2 լայն դաշտագետիկով, պասքէթ-պոլի դաշտով ու մանաւանդ շատ գեղեցիկ ու արդիական գոցօթեայ մարզադաշտով:

Ժամը 7ին հասան եգիպտահայ մարզասերներն ու ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց խումբի անդամները, որոնք եկած էին քաջալերելու աղջիկներու խումբը:

Խումբերու պատասխանատուներուն կողմէ վահանակներու փոխանակումէն ետք յիշատակի լուսանկարներ առնուեցան եւ ապա սկսաւ մրցումը: Մրցումներուն «բարեկամական» ածականը տալով կազմակերպիչ յանձնախումբը բաւական անորակ իրաւարարներ հրաւիրած էր, որոնց իրերայաջորդ կողմնակալ ու սխալ վճիռներով՝ ի վնաս Գահիրէի խումբին, խաղը սկսաւ դառնալ բիրտ ու կաշկանդուած:

Զագիւ թէ Գահիրէի աղջիկները պասքէթներ արձանագրելով թիւ տարբերութիւնը կը նուազեցնէին ու նոյնիսկ առաւելութիւն կ'արձանագրէին, իրաւարարին անիրաւ սուլոցը կու գար քայքայելու աղջիկներուն ջիղերը: Այսպէս ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները բաւական պայքարելէ ետք պարտուեցան 60-70 արդիւնքով:

Երկրորդ մրցումը Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ St. Joseph Զամալսարանի տղոց խումբերուն միջեւ էր: ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը իրենց պատասխանատու Պր. Յակոբ Գարակեօզեանի եւ մարզիչ Ամր Աշուրի հետ անհամբեր կը սպասէին դաշտ իջնելու: Զակառակ որ իրաւարարներուն վարմունքը ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց խումբին հանդէպ նոյնը եղաւ, սակայն տղաքը հոյակապ խաղարկութիւն ցուցաբերեցին ու անտեսելով կողմնակցութիւնները յաղթեցին 60-57 արդիւնքով:

Չորեքշաբթի, 17 Նոյեմբեր 2010

Այսօրուայ պտոյտը դէպի Պիպլոս էր: Պեյրուսէն 40քմ դէպի հիւսիս կը գտնուի այս հին նաւահանգիստը ուր տակաւին կանգուն կը մնան փիւնիկեան, յունական եւ հռոմէական շրջաններէ մնացած հնութիւններ ու պարիսպներ: Խումբը ժամը 10:30ին հասաւ Պիպլոս ուր հնութիւնները դիտելէ եւ հին շուկան այցելելէ ետք առիթը ունեցաւ նստելու նաւահանգիստին եզերքը քով քովի շարուած սրճարաններուն մէջ, մինչ երիտասարդները փոքրիկ նաւակներով պտըտեցան: Ապա Անթիլիասի շրջանին մէջ ճաշելէ ետք վերադարձանք պանդոկ իրիկուայ մրցումներուն պատրաստուելու:

Օրուան առաջին մրցումը ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ԶԵԸ- «Անդրանիկ»ի աղջիկներու խումբերուն միջեւ էր: Նախորդ օրուայ իրաւարարներուն սխալ որոշումներուն պատճառով այնքան դժգոհութիւն եղած էր, որ անոնցմէ մէկը փոխարինուած էր ուրիշով մը, որ սակայն նոյնքան անյաջող էր: Մի քանի անգամ խաղը ընդհա-



տուեցաւ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիչին եւ իրաւարարներուն անհամաձայնութեան պատճառով: ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները կարծեք յուսալքուեցան ու մրցումը ււարտեցաւ ի նպաստ ԶԵԸԻ «Անդրանիկ»ին՝ 53-47 արդիւնքով:

Օրուան երկրորդ մրցումը ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Զայկազեան Զամալսարանի տղոց խումբերուն միջեւ էր: Առաջին իսկ վայրկեանէն յայտնի էր որ այս մրցումը պիտի չամբողջացներ իր օրինաւոր ժամանակը: Սաստիկ լարուածութիւն մը կար, որուն նպաստեց իրաւարարներուն խաղին տիրապետելու անկարողութիւնը: ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պատասխանատու Պր. Յակոբ Գարակեոզեանի բողոքներուն պատճառաւ մի քանի անգամ խաղը ընդհատուեցաւ: 4րդ քառորդախաղի կեսին արդիւնքը 52-45 էր ի նպաստ Զայկազեանին երբ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը նախընտրեց քաշուիլ խաղը աւելի աղիտալի դառնալէ առաջ:

Այսպիսով ււարտեցաւ Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մրցումներուն յայտագիրը Պէյրութի մէջ:

Հինգշաբթի, 18 Նոյեմբեր 2010

Այսօրուայ պտոյտը դէպի Նահր Էլ Զալպի հովիտին մէջ գտնուող Ճէյթայի քարայրներու այցելութիւնն էր: Ճէյթան բնութեան հրաշալիք մըն է որուն նմանը, իր մեծութեամբ ու երկարութեամբ, գոյութիւն չունի ոչ մէկ երկրի մէջ: Ան կրնաք նկատել 9քմ երկարող շթաքարերու (stalactite) եւ պտկաքարերու (stalagmite) գոցօթեայ անտառ մը որուն շարունակութիւնը ցարդ չէ պեղուած ու յայտնաբերուած: Տօնական օրեր ըլլալուն մեծ բազմութիւն կար եւ պետք եղաւ բաւական սպասել կարենալ քարայրներէն ներս մտնելու համար: Ճէյթայէն ետք խումբը ուղղուեցաւ դէպի City Mall ուր մի քանի ժամ ազատօրէն գնումի եւ ուտելու ժամանակ տրամադրուած էր բոլորին:

Գիշերուայ ծրագիրը Down Town, Պէյրութի բուն կեդրոնը երթալ էր: Պէյրութի սիրտը նկատուող այդ շրջանը Լիբանանի քաղաքացիական պատերազմին 1975-1990, սաստիկ վնասուած ու քանդուած էր: Խաղաղութենէն ետք վերանորոգման վիթխարի աշխատանք տարուած է պահպանելով շէքերուն իւրայատուկ ոճը ու վերածուած՝ զբօսնելու շատ հաճելի վայրի մը իր ճոխ ու գեղեցիկ շուկաներով ու ճաշարաններով: Իսկապէս որ հաճելի ու տպաւորիչ ււարտ մըն էր հնգօրեայ այս զբօսապտոյտին:

Ուրբաթ, 19 Նոյեմբեր 2010

Պտոյտին վերջին օրն էր, ուստի մարզիկներէն գատ ամէն ոք ազատ էր մինչեւ կէսօրէ ետք ժամը 3:00, օդակայան երթալու ժամանակը: Ժամը 12ին մարզիկները ուղղուեցան դէպի Զայկազեան Զամալսարան ուր ծանօթացան Զամալսարանին զանազան բաժիններուն ու հիւրասիրուեցան ճաշով: Շրջագայութեան ււարտին յիշատակի լուսանկարներ առնուեցան ու հոնկէ ուղղակի դէպի օդակայան գացին:

Այսպիսով վերջ գտաւ այս շատ յաջող պտոյտը որ գոհունակութիւն պատճառեց բոլորին անխտիր:

Շնորհակալութիւն Պէյրութի ԶԵԸ-«Անդրանիկ»ի եւ Զայկազեան Զամալսարանի պատասխանատուներուն, մեզի ընկերակցող երիտասարդներուն ու մեզ հիւրասիրողներուն:

Շնորհակալութիւն նաեւ Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պատասխանատուներուն: Նոյնպէս, շնորհակալութիւն Գահիրէի ԶԲԸՄ-ին, այս մրցաշարքի կայացման բերած աջակցութեան համար:

Սօսի Ներտտեան - Յակոբեան



15-19 Նոյեմբերին դէպի Պէյրութ կազմակերպուած զբօսապտոյտին մասնակիցներու խմբանկարը



ՅԱՂԹ-ԱՆԱԿՆԵՐՈՒ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Շաբաթ, 4 Դեկտեմբեր 2010ին Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչությունը սովորական էն տարբեր ձեով տոնախմբեց ակումբին պասքեթպոլի երեց տղոց նուաճած յաղթանակները 2010ի եգիպտահայ չորս մրցաշարքերուն:

Այս տարուայ ձեռք ձգուած չորս բաժակներուն կենացը խմուեցաւ ոչ թէ , ինչպէս ամէն տարի , ակումբին մէջ ոչխարասեղանով մը, այլ Mercado ճաշարանին մէջ կազմակերպուած շքեղ խնճոյքով: Հելիոպոլսոյ այս փոքրիկ ճաշարանը այդ երեկոյ վերապահուած էր միմիայն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ ցիներուն համար: Մուտքին կը ծածանէր հայկական եռագոյնը եգիպտական դրօշակին կողքին ու ներսը ճաշակով շարուած սեղաններն էին, որոնք շուտով շրջապատուեցան ակումբին վարչականներով ու իրենց

տիկիներով, համակիրներով եւ մարզիկ մարզիկուհիներով: Երեկոն կը շէնցներ ճաշարանին երգիչը, որ իր հաճելի ու այլազան երգերով պարահարթակը լեցուն պահեց մինչեւ կէս գիշերը անց:

Մարգասարահին ատենապետ Տոքթ. Կարո Աբգարեան խօսք առնելով շնորհաւորեց ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը իրեց արձանագրած յաղթանակներուն համար ու անոնց յանձնեց յիշատակի նուէրներ: Ապա յատուկ շնորհակալութիւն յայտնեց խումբին նախկին մարզիկ եւ պատասխանատու Պր. Յակոբ Գարակեօզեանին ու մարզիչ Ամր Աշուրի եւ իրեն օգնական Ալաա Չահրանի:

Վերջին մրցաշարքին ձեռք ձգուած բաժակը սեղանէ սեղան կը պտըտեր ու խանդավառութիւն կը ստեղծեր: Մի քանի մարզիկներ իրենց սրտի խօսքը արտասանեցին ու ապա՝ մէջտեղ բերուեցաւ կարկանդակը ու ներկաներուն ընկերակցութեամբ երգուեցաւ «We are the champions» երգը, որ առանց ոչ մէկ տարակարծութեան կը ներկայացնէ Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վերջին մի քանի տարիներու վիճակը:

Այսպէս մտերմիկ մթնոլորտի մը մէջ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մեծ ընտանիքը անգամ մը եւս ըմբռնեց իր յաղթանակներուն առթած հրճուանքը:

Սօսի Ներեւեան - Յակոբեան



Յիշատակի լուսանկարներ Յաղթանակներու Տոնախմբութենէն Mercado ճաշարանին մէջ



ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԿԱՂԱՆԴԻ ՊԱԶԱՐԸ

Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ամանորեայ ամսնդական պազարը տեղի ունեցավ Ուրբաթ 17 Դեկտեմբեր 2010-ին: Աւելի քան 150 անդամներ, համակիրներ եւ պատանիներ փութացած էին ակումբ՝ վայելելու Գահիրեի ձմրան հաճելի արեւը եւ միաժամանակ, օգտուելով Տիկնանց Յանձնախումբին կազմակերպած ճոխ պազարէն, գնելու իրենց նախասիրած անուշեղէններն ու հայկական ամսնդական ուտեստեղէնները:



ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պարտեզը, կաղանդի պազարին բացումը սպասող ներկաներով

Այս առթիւ ակումբին Տիկնաները, գլխավորութեամբ Ժրաշան անդամուհի Տիկին Գոհար Առաքելեանի, ջանք չէին խնայած ձեռնարկին փայլուն յաջողութիւն մը ապահովելու համար:

Ժամը ճիշդ 1:30-ին, օրուան նախագահուհին՝ Տիկին Լալա Նիկոլեան, մկրատի հարուածով մը սրահին մուտքին ժապաւենը կտրելէ յետոյ, պազարը բացուած յայտարարուեցաւ: Անհամբեր ժողովուրդը խուժեց ներս՝ գեղեցկօրէն զարդարուած սրահը, ուր 10 սեղաններու վրայ շքեղօրէն ցուցադրուած էին ախորժելի այլազան քաղցրեղէններ եւ այլ ուտելիքներ, որոնք շուտով սպառեցան: Ապա գնորդները գոհունակ, բեռնաւորուած ուղղուեցան ակումբին արեւոտ, օդասուն պարտեզը՝ ուր ճաշակեցին սպասարկուած համադամ

խորտիկները:

Կեսօրէ ետք, ժամը 4-ին ելոյթ ունեցաւ ճափոնցի կանանց երգչախումբը, որ՝ տարբեր լեզուներով Սուրբ Ծննդեան երգերու կողքին, երգեց նաեւ երեք հայկական երգեր, զարմանք եւ միաժամանակ հրճուանք պատճառելով բոլոր ներկաներուն:

Այս առթիւ կ'ուզենք շնորհակալական խօսք ուղղել Օր. Արփի եւ Պր. Օհան Ծանկեաններուն, որոնք՝ իրենց բերած աջակցութեան շնորհիւ, մեծապէս նպաստեցին ձեռնարկին յաջողութեան. ինչպէս նաեւ Մօ.Յայկ Աւագեանին, որուն ջանքերուն շնորհիւ, ճափոնցիները հայերէն երգեր երգեցին:

Վարձքը կատար բոլորին:

Թրգմ. Ա.Ճ.



Օրուայ նախագահուհի Տիկին Լալա Նիկոլեան պազարին բացումը կատարելէ ետք



Պազարէն տեսարան մը



ԿԱԳԱՆԳ ԳԱԳԱՆ ԿՆՅՑՅԵԼԷ ՀՄԸՄ ԾՈՒԳԱՐ

Ուրբաթ 24 Դեկտեմբեր 2010-ին, ՀՄԸՄ-ՆՈՒԳԱՐ ակումբին ներս, տեղի ունեցավ մա-
նուկներուն Կաղանդի տօնակատարութիւնը:
Ծնողներ, փոքրեր, անդամներ եկած էին՝ ու-
րախ մթնոլորտի մը մէջ, հաճելի օր մը անցը-
նելու:

Փոքրիկներն ու անոնց ծնողները, Օր. Ար-
փի Ճանիկեանի առաջնորդութեամբ, երգե-
ցին ամանորեայ եւ Ս.Ծննդեան երգեր հաճե-
լի մթնոլորտ մը ստեղծելով իրենց շուրջ: Այս
առթիւ Պր. Օհան Ճանիկեան սիրայօժար

հայթայթած էր ձայնային բոլոր սարքաւո-
րումները եւ ստանձնած՝ անոնց կարգաւո-
րումը:

Կազմակերպուած գանազան խաղերը,
կենսուրախ եւ զբաղ պահեցին փոքրերը մին-
չեւ ժամը չորս՝ Կաղանդ Պապային ժամանու-
մը, որը մուտք գործեց կքած՝ իր թիկունքին
շալկած լեցուն նուէրներով պարկին բեռան
տակ:

Ուրախ ճիչերու տարափի մը տակ, տեղի
ունեցաւ նուէրներու բաշխումը:



ԿԱԳԱՆԳ ԳԱԳԱՆ ԿՆՅՑՅԵԼԷ ՀԲԸՄԻ «ԾԻԱԾԱՆ» ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄՔԻՆ

Հինգշաբթի 30 Դեկտեմբեր 2010-ին, իրենց
շաբաթական փորձին ընթացքին, Գահիրէի
ՀԲԸՄ-ի «Ծիածան» Մանկական Երգչախում-
բին անդամները, անհուն ուրախութեամբ դի-
մաւորեցին Կաղանդ Պապան, որ երգչա-
խումբին հիմնմադրութենէն ի վեր, արդէն վեց

տարի է կանոնաւորապէս կ'այցելէ իրենց:

Փոքրերը, առաջնորդութեամբ Մօ. Միհրան
Ղազելեանի եւ իր տիկնոջ՝ Գոհարի,
խանդավառութեամբ երգեցին իրենց հին ու
նոր երգերէն գողտրիկ փունջ մը, դաշնակի
ընկերակցութեամբ Տիկին Նանօր Աբիկեանի:
Կաղանդ Պապան գոհունակ, նուէրներ
բաշխեց երգչախումբին անդամներուն
ինչպէս նաեւ անոր ղեկավարներուն՝
Մօ.Միհրան եւ Տիկին Գոհար
Ղազելեաններուն եւ դաշնակարուհիին՝
Տիկին Նանօր Աբիկեանի:



Սոյն ձեռնարկին կազմակերպութեան
իրենց օժանդակութիւնը բերած էին Տիկին
Ալին Ճիգմեճեան, Օրիորդներ՝ Արփի
Խաչերեան, Ռուբինա Ասլանեան եւ Նախկին
«Ծիածան»ցի Վարդան Թերզիպաշեան:

Թրգմ. Ա.Ճ



ԱՆԴԱՄԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴ

4 Յունուար 2011-ին Փարիզի մեջ լոյս աշխարհ եկաւ Դալարը, ուրախութիւն պարգեւելով իր ծնողքին՝ Տէր եւ Տիկին Վահէ եւ Մարալ Նաճարեաններուն:



Դալարի ծննդեան առթիւ կը շնորհաւորենք ծնողքը, մեծ ծնողները՝ Տէր եւ Տիկին Վարուժան եւ Մարո Նաճարեանները եւ Տէր եւ Տիկին Ժիրայր եւ Սօսի Յակոբեանները, ինչպէս նաեւ մեծ-մեծ ծնողները՝ Տիկին Էլիզ Յակոբեանը, Տիկին Անժէլ Յակոբեանը եւ Տէր եւ Տիկին Կարօ Ներեւտեանները:

Թող սորածին Դալարին կեանքը ըլլայ միշտ դալար:

ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ



Ուրբաթ, 12 Նոյեմբեր 2010-ին, մահը խլեց կեանքը ԶԲԸՄ-ի անդամներէն Տոքթ. Նորայր Սիմոնեանի: Հանգուցեալը եղած է ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքէթպօլի առաջին խումբի նախկին մարզիկներէն եւ նոյն Սիւրբեան նախկին վարչական գործօն անդամներէն:

Այս տխուր բաժանման առթիւ խորազգաց ցաւակցութիւններ կը յայտնենք հանգուցեալին այրիին՝ Տիկին Սոնիայի, գաւակներուն՝ Տէր եւ Տիկին Զրիս եւ Սիլվա Սիմոնեաններու, Տէր եւ Տիկին Եաննի եւ Գարուին Կրէկորիուի, թոռներուն եւ հանգուցեալին բոլոր հարազատներուն:

Անհուն կսկիծով կը գուժենք 3 Դեկտեմբեր 2010-ին պատահած անժամանակ մահը, աւելի քան տասնամեակ մը Հայ Գեղարուեստասիրաց Սիւրբեան ատենապետութիւնը վարած Գրիգոր Մարգարեանի:

Հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնն ու մայրենի լեզուին հանդէպ տածած սերը առաջնորդած են հանգուցեալը երիտասարդ հասակէն մաս կազմելու նախ Աղեքսանդրիոյ, ապա՝ Գահիրէի մէջ գործող ազգային, կրթական, մշակութային եւ բարեսիրական հաստատութիւններու եւ յաճախ, որպէս գործօն վարչական անդամ ինչպէս նաեւ որպէս անդամ Ազգային Իշխանութեան իր ներդրումը ունենալու եգիպտահայ գաղութի կեանքէն ներս:

Հանգուցեալը որպէս հաղորդավար մօտ 10 տարի մաս կազմած է նաեւ Գահիրէի Պետական Զայնասփիւռի Հայկական Բաժնին ու իր պատրաստած ու ձայնասփռած հաղորդումներով հետաքրքրական նիւթեր փոխանցած ունկնդիրներուն:

Այս ցաւալի կորուստին առթիւ մեր ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալին հարազատներուն, քրոջ՝ Տիկին Ալիս Մազլումեանի, քրոջ գաւակներուն՝ Տէր եւ Տիկին Շահէն Մազլումեաններու, Տէր եւ Տիկին Գեորգ Մազլումեաններու եւ անոնց գաւակներուն: